

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ՄԻԷՏԱԲԵՐ

Ե. ՏԱՐԻ

ՀԱՆԷՊ, Զ ՍԵՊՏԵՄԲԵՐ, 1932

ԹԻԻ 16-16

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

Գերագոյն Արժեք

Տ. ձ. Խ.

ՀՈԳԵՒՈՐ

Լուռ Երկրագործին

(Ա. ՄԸՐԷՅ)

Անասունած Երեսփոխան

Կեանքի Նշանակությունը

(ՀԱՐՑԼԸՐ)

ՅՕԴՈՒԱԾՆԵՐ

Ս. Գիտքի Ուսումնասիրությունը

ՎԵՐ. Հ. Հ. ԲԻԿՍ

Մեր Պարտականությունն ու Կոչումը

ՎԵՐ. Ս. Ս. ՄԱՆՈՒԿԵԱՆ

Մովսէս Խոթենացի

ՌԵՏՈՒՆԻ

Փուլանո

ԹՐԳ. Յ. ԱՊԱՃԵԱՆ

Քիմիագիտություն և Քաղաքակրթություն

ՏՈՔԹ. Ա. ԱՊՈՒՀԱՅԱԹԵԱՆ

Ոսկեփերանք

ՎԵՐ. Ե. ԿԷՕՔԿԷՕՋԵԱՆ

Դիտական Քրոնիկ

ԱՄՓ. Հ. ՓՈԼԱՏԵԱՆ

ԱՅԼԵՒԱՅԼ

Սարգ Կղզին

Տնտեսական Նօքեր

Հալեպի Զուր

Մառուի Քարիւղ

ՀԱՅ ԿԵԱՆՔ

ՆՈՐ ԱԻՅՏԱՐԵՐ

Կը հրատարակուի ամիսը երկու անգամ, տարեկան բաժնեգրեմ է 180 դրուշ սուրի. Սուրիոյ համար, և մէկ ու կէս տուրք՝ ուրիշ բոլոր երկիրներու համար:

ՆՈՐ ԱԻՅՏԱՐԵՐԻՆ ՄԱՏԵՆԱՄԱՐ

Պատանիներու ընթերցանութեան համար կրթիչ գիրքերու պակասը խիստ զգալի է: Այս կէտը նկատի առնելով ճնոր Աւետարեբրձի խմբագրութիւնը այս անգամ հրատարակած է՝

ԲԱՐՈՅԱՎԷՊԵՐ

անուն հատորիկ մը, որ կը պարունակէ խիստ հետաքրքրական և բարոյացուցիչ 15 իրական պատմութիւններ և պատմութեամբներ: Ամէն պատանի, ինչպէս նաև դաստիարակներ և ծնողներ շատ օգտակար պիտի գտնեն զայն: Գինն է 25 դրշ. տուրիական (կամ 50 անթ Լամերիկայի և Եգիպտոսի համար): Դիմել խմբագրութեան հասցէին:

ՍՍԱՑԱՆՔ

ՊԱՏԱՆԻՆ ԳՐԱԴԱՐԱՆԸ, Եգիպտական Աւանդավէպեր, հատոր թիւ 39, 40, 41, 42, 43 և 44: Հրատարակութիւն ՍԱՀԱԿ ՄԵՍՐՈՊ տպագրատան: 25 Sh. Tiwfi, Cairo. Egypt

MASSIS Հայկական շահերու օրկան տնօրէնքէն, խմբագրութեամբ Տիար Արշակ Սոփրատեանի. vol. IV, No. 4(40).

ԼՈՅՍ ՏԵՍԱԻ

ՅԻՇԱՏԱԿՆԵՐ


ԴՐՈՒԱԳՆԵՐ ԿԵԱՆՔԻՍ ՊԱՏՄՈՒԹԵՆԷՆ

Տոքթ. Ա. Նազգաշեան 115 էջերէ բաղկացեալ այս հատորին մէջ իրեն յատուկ զուարճախօսութեամբ և սրամտութեամբ կը պատմէ իր կեանքին կարգ մը դրուագները մանկութեան շրջանէն սկսեալ մինչև հիմա: Գինն է Ամերիկայի համար 50 անթ և ուրիշ երկիրներու համար 6 ֆրանկ: Դիմել ճնոր Աւետարեբրձի հասցէին:

ՓԻԼԱՐՏՈՍ ՀԱՅԸ

ԳՐԵՑ՝ ԿՈՍՄԱԳԵՆԱՑԻ

Կոմագենացիին հմուտ պատմագետ մըն է որ գրած է հաճելի ոճով ներկայացընել անցեալի դէպքերը: Հատորս 16 գլուխներով գեղեցիկ և քննական ուսումնասիրութիւն մ'է Հայոց Պատմութեան Կիլիկիան շրջանին սկզբնաւորութեան մասին: Գինն է 10 ֆրանկ Սուրիոյ համար, կէս տուրք ուրիշ երկիրներու համար: Ծաւալն է 95+82 էջ: Դիմել ճնոր Աւետարեբրձի հասցէին:



ՆՈՐ ԱՒԵՏԱԲԵՐ

Ե. ՏԱՐԻ

ՀԱԼԷՊ, 2 ՍԵՊՏԵՄԲԵՐ, 1932

ԹԻԻ 15-16

ԳԵՐԱԳՈՅՆ ԱՐԺԷՔԸ

Ամէն անհատ իր ուրոյն աշխարհն ունի զոր կը շինէ իր փորձառութեամբը տորված ամէն տեսակ իրականութիւններով և կազմած տեսականներով, փափազներով: Այս բոլոր նիւթական իրերն ու իրականութիւնները, ճշմարտութիւններն ու կարծիքները, երազներն ու տենջերը գիտակից կամ անգիտակից կերպով դասաւորուած են իրենց համեմատական արժէքին շարքովը: Այսպէս ամէն անհատ կը շինէ արժէքներու ցանկ մը, որուն մէջ մէկը կ'իշխէ բոլորին վրայ: Այս ցանկին մէջ արժէքները իրենց գիրքերը տեսականօրէն նոյնը չեն պահեր, առօք ենթակայ են փոփոխութեանց: Օր մը առաջին աստիճանէ արժէք մը վաղը կրնայ երկրորդ կամ երրորդ աստիճանի իջնալ, մեր առօրեայ փորձառութեան և ներքին ապրումներուն զարգացումին համեմատ: Բայց մեզի համար ամենէն կարեւոր կէտը մեր գնահատումն է բարձրագոյն արժէքին մասին: Մեր անհատական աշխարհին մէջ ի՞նչ է այն բանը որուն ամենաբարձր արժէքը կը վերագրենք: Այս կէտը կ'որոշէ մեր նկարագրին իսկական վիճակը:

Մարդիկ մեծապէս կը տարբերին այս ամենաբարձր արժէքը որոշելու մէջ: Ինչ որ մէկու մը համար բարձրագոյն արժէքը կը ներկայացնէ ուրիշի մը համար շատ պիտիկ արժէք մը կրնայ ունենալ: Մէկու մը համար՝ անձնական շահը, ուրիշի մը համար իր ժողովն կամ աշխարհին շահը, ժամանց համար նիւթական շահը, ուրիշներու համար հոգեկան շահ մը գերագոյն արժէքը կը ներ-

կայացնէ: Բայց մեզի համար ԱՆՁՆԱԻՈՐՈՒԹԻՒՆՆ է որ գերագոյն արժեքը կը կազմէ: Աստուածային և մարդկային անձնաւորութիւններ կան որոնցմէ երկրորդը իր արժէքը և իմաստը կ'ստանայ առաջինէն, և իր փառքը կը կազմէ նոյնանալ Անոր հետ: Ինչ օր կայ աշխարհի վրայ սահմանուած է ծառայելու անձնաւորութեան զարգացումին և անոնք այնքան արժէք ունին որքան օգտակար կ'ըլլան իրենց այս պաշտօնին մէջ:

Որչափ աւելի գնահատենք անձնաւորութիւնը այնքան աւելի գաւազնաւորալիւր վերաբերում և նուիրում ցոյց կուտանք անոր հանդէպ: Վեր եղբօրը պարագայ տեղը սրգոյնել, Վեր եղբօրը յիմար... անմիտ բան մեղք է ինչպէս որ սորվեցուց միծ Վարդապետը: Աւելի լաւ է ծովամոյն ըլլալ քան պըղտիկ մը զայթակղեցնել, և Աստուած իր միածին Որդին տուաւ, որպէսզի օվոր անոր հաւատայ չկորսուի հապա յաւիտենական կեանք ունենայ: Ասոնք և նման խօսքերը շատ լաւ կը ցլացնեն անձնաւորութեան արժէքին մասին Աւետարանի լոյսը: Անձնաւորութեան արժէքին և նուիրականութեան մասին մեր յարգալիւր գնահատումը մեզ պիտի մղէ վերէն վար շրջելու մեր բոլոր աշխարհը: Մեր խորհուրդները և գործերը միշտ պիտի գտնան Աստուածային անձնաւորութիւնը մարդկայինին մէջ մարմնացնելու շուրջ: Այս կերպով է որ մարդ կ'աւելնայ աւետարանչական խանդ, մեղքին չհանդուրժող և և մեղաւորին համար լացող, և անոր փրկութեան համար գոհուող ոգին: Որչափ կը կարօտինք ասոր:

ՀՈՒՌ ԵՐԿՐՊԱԳՈՒԹԻՒՆ

«Յիրաւի իմ անձս յոյկ կ'սպասեմ Աստուծոյ . . . Ով իմ անձս, սիրայն Աստուծոյ սպասեմ, վասնզի անկե ե իմ յոյսս:»

Երբ մարդ իր պզտիկութեամբը և Աստուած իր փառքով իրարու հանդիպին՝ մենք բոլորս ալ կը հասկնանք թէ Աստուծոյ ըսածը մարդուն ըսածէն անհունօրէն աւելի արժէք ունի: Եւ սակայն մեր աղօթքը յանախ կը բաղկանայ մեր կարօտ եղած բաներու մասին մեր խորհուրդները յայտնելէ և մենք Աստուծոյ ժամանակ չենք տար մեզի խօսելու համար: Մեր աղօթքները յաճախ շատ անորոշ և անիմաստ կ'ըլլան: Սորվելիք մեծ դատ մը սա է թէ Աստուծոյ առջև լուռ կենալ ճշմարիտ երկրպագութեան գաղտնիքն է: Յիշենք սա խոստումը թէ մեր ոյժը հանգարտութեան և վստահութեան մէջ է:

Սիրտը՝ Աստուծոյ մերձաւորութեան և Անոր այժին ներգործումին Աստուծային ազաւորութիւնը ընդունելու պիտի բացուի այն ատեն, երբ հոգին Անոր առջեւ կը խոնարհի յիշելու Անոր մեծութիւնն ու արքութիւնը, Անոր ոյժըն ու սէրը, և կը ջանայ Անոր արժանի փառքը, պատիւը և երկրպագութիւնը ընծայել:

Ո՛վ քրիստոնեայ, հաւատա ար Աստուծոյ արժանի փառքը տալու վստահ կերպը Աստուծոյ այսպիսի երկրպագութիւնն է, որով դուն քու ոչնչութեամբդ աւելի ու աւելի կը խոնարհիս, և խորհուրդներդ կը վերացնես Աստուծոյ ներկայութիւնը զգալու՝ ինչպէս որ Ան Յիսուս Քրիստոսով ինքզինքը քեզի կուտայ, և այսպիսի երկրպագութիւնը պիտի առաջնորդէ բարձրագոյն օրհնութեան որ աղօթքի մէջ կրնայ գտնուիլ:

Մի՛ երեւակայիր որ կորսուած ժամանակ է այս: Ատկէ ետ մի կենար, եթէ առաջին անգամուն ամն դժուար

կամ ապարդիւն երեսնայ: Վստահ կղեր որ ան քեզ Աստուծոյ հետ շիտակ յարաբերութեան մէջ կը գնէ:

Անոր հետ հաղորդակցութեան ճամբան կը բանայ: Ան քեզ կ'առաջնորդէ սա օրհնեալ վստահութեան թէ Ան գուրգուրալի սիրով քեզի կը նայի և դադտնի բայց Աստուծային ոյժով քու մէջդ կը գործէ: Եւ երբ վերջապէս դուն անոր աւելի վարժուիս բոլոր օրը քեզի հետ մնացող Անոր ներկայութեան գիտակցութիւնը պիտի տայ քեզի: Ան քեզ պիտի զօրացնէ Աստուծոյ համար վկայելու: Մեկը առպէս ըսած է. «Ոչ մէկը բարութեան և արքութեան համար ուրիշներուն վրայ կրնայ ազդել աւելի քան այն չափէն որ իր մէջը Աստուծոյ մէջ կը գտնուի»:

«ՏԵՐԸ ԻՐ ՍՈՒՐԲ ՏԱՃԱՐԻՆ ՄԷՋ Է, ԱՆՈՐ ԵՐԵՍԻՆ ԱՌՋԵՒ ՀՈՒՌ ԿԵՑԻՐ, Ո՛Վ ԲՈՂՈՐ ԵՐԿԻՐ» (Ամբ. 2.20):

ԱՆԱՍՏՈՒԱԾ ԵՐԵՍՓՈՒՄՆԸ

Հետեւեալ պատմութիւնը պատմուած է Մր. Ս. Տ. Կորտենի կողմէ, և զայն Պաւնտղի PURPOSE IN PRAYER գիրքէն քաղելով կը ներկայացնենք մեր ընթերցողներուն: Ծ. Խմբ.

Այս մարդը (երեսփոխանը) նիւ ինկլէնտի հին ընտանիքէ մը, աւելի ետ երթալով Անգլիացի ընտանիքէ մը սերած էր: Հօկայ մարմինով, սուր միտքով, համալսարանական կրթութեան տէր մարդ մըն էր: Մ. Նահանգաց արեւմտեան մասը հաստատուած էր և Գոնկրիսի (Մ. Նահանգաց օրէնսդիր ժողով) մէջ կարեւոր շրջանի մը ներկայացուցիչն էր: Հոն յայտնի պետ մ'էր: Քրիստոնեայ ընտանիքի մը մէջ մեծցած էր, բայց ինքը սկիպտիկ էր և սովոր էր քրիստոնէութեան դէմ ճառեր խօսիլ: Ինծի պատմեց թէ ինքը շատ կը սիրէր իր ճառերուն մէջ վերջնականօրէն փաստել Աստուծոյ չգոյութիւնը:

«Օր մը, պատմեց ինծի մարդը, Ե-

բեսփոխանական ժողովի մէջ կը նստէի: Նախագահական ընտրութեան մը տոհմն էր, և կուսակցական զգացումը յորդած: Մէկը պիտի կարծէր թէ վերջին տեղն էր այս ուրմարդու մը հոգեւոր բաներու վրայ խորհիլը հաւանական ըլլար: Ժիշդ այդ տաքցած մթնոլորտին մէջ այն զգացումը ունեցայ թէ Աստուած, որուն չգոյութիւնը կը խորհէի թէ կրնայի յաջող կերպով փաստել, ճիշդ իմ վերեւս կայնած է ինծի նայելով, և դժգոհ ըլլալով ինծմէ: Ինքնիրենս ըսի թէ ասիկա ծիծաղելի է, շատ ծանր աշխատած եմ, երթամ լաւ ճաշ մը և երկար պտոյտ մը ընեմ, և այս զգացումը պիտի անհետի: Այս բոլորը ըրաւ, և ժողովը վերադարձաւ բայց Աստուծոյ ներկայութեան և իրմէ դժգոհութեան մասին ունեցած տպաւորութիւնը չէր կրնար փարատել: Օրեր յաջորդաբար պտոյտ ըրաւ բայց այդ զգացումէն չկրցաւ ազատիլ:

Ձինքը ընթրող շրջանը գնաց: Իր նահանգին կառավարիչը ըլլալ կը փափաքէր, և իրաց ընթացքէն դատելով յաջողութեան ճամբու մէջ էր: «Բայց հոգիւ տաւն հասայ, կը պատմէ երեսփոխանը, երբ կինս ինծի յայտնեց թէ իրենք մի քանի հոգիներ աղօթքի ուխտ մ'ըրած էին, որպէսզի ես քրիստոնեայ մը դառնամ»: Ան չուզեց որ կինը գիտնայ թէ ինքը ճիշդ այդպիսի փորձառութեան մը մէջէն կ'անցնէր, և անհոգօրէն հարցաւք թէ իրենց այս աղօթքը ե՞րբ ըրին: Կինը թաւականը յայտնեց և ինք գտաւ թէ անկիայ կը դուգադիպէր ճիշդ այդ տարօրինակ տպաւորութիւնը ունեցած պահուն:

Ուժգին կերպով ցնցուեցայ, պատմեց ինծի: Ուզեցի պարկեշտ ըլլալ. կատարելապէս անկեղծ էի Աստուծոյ չհաւատալու մէջ, և կը կարծէի թէ ես չիտակ էի: Բայց եթէ կնոջս ըսածը ճիշտ էր, լաւ փաստ մը պէտք էր ըլլալ

ցուցնող թէ իրենց աղօթքին մէջ իրական բան մը կար: Ինչ ընդիւքս չէի գիտեր: Նոյն գիշեր Մեթոտական փոքր եկեղեցի մը գացի, եթէ մէկը ինծի հետ խօսակցելու կերպը գիտնար այդ գիշեր թերեւս քրիստոսը դառած պիտի ըլլայի: Հետեւեալ գիշեր նոյն եկեղեցին նորէն գացի, և խորանին առջեւ ծնրադրեցի, և յամառ կամքս Աստուծոյ կամքին յանձնեցի: Եւ ես հասկցայ թէ ես պէտք էի քարոզել: Եւ մինչեւ այսօր (1920) կը շարունակէ քարոզել արեւմտեան Նահանգի մը մէջ:

Ասիկա պատմութեան կէտն է: Ես իր կնոջ հետ ալ խօսակցեցայ որ ինծի պատմեց հետեւալը:

Կինը անուանական քրիստոնեայ մը եղած էր: Բայց ատին մը եկաւ երբ ան իր կեանքը բոլորովին Յիսուսի նախընտրու առաջնորդութեամբ: «Անմիջապէս, կը պատմէ կինը, սառտիկ փափաք մը ունեցայ որ ամուսինս ալ քրիստոնեայ մը կարենայ ըլլալ, և մենք այդ ուխտը կազմեցինք ամէն օր անոր մասին աղօթելու համար մինչեւ օր ան քրիստոնեայ դառնար: Այդ գիշեր հանգչելու երթալէ առաջ անկողնիս քով ծիրադրած ամուսնիս համար ջերմօրէն կ'աղօթէի: Այդ պահուն ձայն մը ինծի ըսաւ. «Երբ ամուսինդ քրիստոնեայ դառնայ յառաջ գալիք արդիւնքներուն յօժաօր եմ»: Այս պզտիկ պատգամը շատ թրոշ էր, որ ինծի մեծ վախ պատճառեց: Այսպիսի փորձառութիւն մը ունեցած չէի: Բայց շարունակեցի աւելի ջերմօրէն աղօթել, և այդ խաղաղ ձայնը նորէն եկաւ. «պատրաստ ես արդիւնքը ընդունելուն: Եւ նոյն վախի զգացումը դարձեալ, Շարունակեցի աղօթել զարմանալով թէ ինչ կը նշանակէր այդ: Եւ երբորդ անգամ ըլլալով, աւելի խաղաղ կերպով, դարձեալ եկաւ այդ ձայնը:»

Ապա մեծ խանդով կ'աղօթէ ըսելով,

«Ով աստուած, յօժար եմ ունէ բանէ զոր դուն բարի կը խորհիս, եթէ միայն ամուսինս Բեզ ճանչնայ և ճշմարիտ քրիստոնեայ մը ըլլայ»: Այս աղօթքին անմիջապէս յաջորդեց մեծ խաղաղութեան մը զարմանալի զգացում մը, այնպիսի խաղաղութիւն մը որ հասկըցողութենէն վեր է, և այդ վայրկեանէն սկսեալ, ճիշդ այն գիշերը երբ ամուսինը իր առաջին տարօրինակ փորձառութիւնը ունեցած էր, միշտ վրստան էր թէ ամուսինը Գրիստոսը պիտի ընդունէր: Բայց բոլոր այդ շարաքնեքուն միջոցին շարունակ աղօթեց Վստահ ըլլալով արդիւնքին մասին: Արդիւնքը ի՞նչ եղաւ: Արդիւնքը այն տեսակէն էր, զոր ոչ մէկը պատիկ պիտի նկատէր: Ան՝ կիսն էր քաղաքական

շատ կարեւոր դիրքի տէր մարդու մը, ան կիսն էր մարդու մը որ իր Նահանգին մէջ առաջին պաշտօնեան ըլլալու ճամբուն մէջ էր, և ինքը ընկերային առումով իր Նահանգին առաջին տիկինը պիտի ըլլար՝ այդ ընկերային դիրքին բերելիք բոլոր պատիւովը: Հիմա ան Մեթոտական քարոզիչի մը կիսն է, ամէն 2-3 տարին անգամ մը իր տեղը կը փոխէ, Թափառակաւի մը նման, տարեկան շատ տարբեր եկամուտ ունենալով քան այն զոր ուրիշ կերպով պիտի ստանար. ընկերային որչա՞փ տարբեր դիրք մըն է այս: Այսուհանդերձ ես երբեք չհանդիպեցայ կնոջ մը որ իր արտին մէջ Աստուծոյ հրաշալի խաղաղութենէն և իր զէմքին վրայ Աստուծոյ լոյսէն իրմէ աւելի ունեցած ըլլայ:

Ս. ԳԻՐՔԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆԸ*

Ամէն քրիստոնեայի համար կենսական կարեւորութիւն ունի սա հարցումը թէ անձնական օգտին համար ինչպէ՞ս պէտք է ուսումնասիրել Ս. Գիրքը: Ս. Գիրքը օյժի և կեանքի աղբիւր մըն է քրիստոնեայի համար: Բայց շատեր անկէ չեն օգտուիր, քանզի երբ Ս. Գիրքով առանձին կը գտնուին չեն գիտեր թէ ինչպէ՞ս պէտք է ուսումնասիրել զայն: Անոնք ուրիշ մարդերէն թիւադրութիւններ կ'ընդունին և ուրիշ գիրքերէն օգուտ կը քաղեն, բայց գիրքերուն Գիրքը, որ հոգեւոր անուղի աղբիւրն է, իր գանձերը չի բանար, քանզի անոնք չեն գիտեր թէ ուսկի՞ց պէտք է սկսիլ:

Ձկան երկու քրիստոնեաներ որոնք պէտք են Ս. Գիրքը նոյն կերպով ուսումնասիրել: Ս. Գիրքը ուսումնասիրելու համար շատ մեթոտներ կան: Հետեւեալ յօդուածով կ'ուզեմ մի քանի թիւադրութիւններ ընել որոնք կրնան ոմանց օգտակար ըլլալ ինչպէս որ ինծի եղած են:

Այս թիւադրութիւններէն առաջինը տալիս է թէ Գիրքը մենք պէտք է կարդանք Աստուծոմէ մեզի համար եկող պատգամ մը լսելու նպատակով: Ոմանք Ս. Գիրքը միայն հետաքրքրութեան համար կը կարդան: Շատ հետաքրքրական գիրք մըն է ան, և կը պարունակէ շատ հետաքրքրական պատմութիւններ և զէպքեր: Մէկը զանազան կրնայ կարդալ առանց անոնցմէ օգտուելու, կամ նոյնիսկ կրնայ իրապէս ֆիւսայութիւն եթէ միայն հետաքրքրութեան համար կը կարդայ զայն: Ուրիշներ ասոր հակառակը ե-

*Մեր թիւ 10 ի մէջ Ծննդոց գրքին մասին Մր. Բիկոյի հրատարակուած յօդուածը պիտի յաջորդէր ներկայ յօդուածին, բայց կը ցաւինք որ օխալմամբ ասկէ առաջ հրատարակուած է: Ծն. Խմբ.

դող թխալ մը կ'ընեն, այսինքն առանց
ոեէ հետաքրքրութեան կը կարդան,
բայց սա մտադրութեամբ որ իրենց ար-
դէն հաւատացածներուն փաստեր գըտ-
նեն, անոնք կը փնտռեն իրենց գիտցա-
ծը հաստատող համարներ՝ փոխանակ ի-
րենց չգիտցածը սորվեցնող համարնե-
րու: Ուրիշներ միայն մարդոց քարո-
զելու տեսակէտէն կը կարդան Ս. Գիր-
քը, և երբեք ժամանակ չեն տար խոր-
հելու թէ ան իրերց համար ինչպիսի
պատգամներ կ'ուզէ տալ: Քաբոպիչնէրու
մեծ փորձութիւնն է այս, որուն ար-
դիւնքը կ'ըլլայ մեռեալ քարոզներ: Բո-
լոր մարդերէն աւելի քարոզիչն է որ
պէտք ունի Աստուածաշունչին մօտե-
նալու անկէ իրեն համար պատգամ
գտնելու նպատակով: Միայն այս կեր-
պով, երբ պատգամը անոր տիրանայ,
քարոզիչը կրնայ այդ ճշմարտութիւնը
քարոզել իւր կենդանի պատգամ մը:
Այսպէս՝ Ս. Գիրքը ուսումնասիրենք
ակնկալելով թէ մեր կեանքերուն հա-
մար կենսական ճշմարտութիւն մը պի-
տի սորվինք անկէ, և թէ Աստուած մե-
զի պիտի խօսի և մենք պիտի լսենք ու
պիտի հնազանդինք:

Ս. Գիրքի ուսումնասիրութեան մէջ
ուրիշ կէտ մը առ է թէ մենք պէտք է
յոժարինք Դիրքը ազատ թողելու որ ի-
րեն համար խօսի: Մի աշխատիր անորը
սել տալ ինչ որ կը խորհիս թէ անիկա
պէտք էր խօսիլ: Չանա՛ հասկնալու ինչ
որ իրապէս ան կ'ըսէ, նոյն իսկ եթէ ան
քու միտքիդ մէջ եղածէն շատ տարբեր
երեւան ելլէ: Զորօրինակ, երկար տա-
րիներ Յովհաննէսի Աւետարանը կար-
դացի սա գաղափարով թէ նոյն պատ-
մութիւնը ճիշդ միւս Աւետարաններուն
պէս պէտք է պատմէ. անոր տարբերու-
թիւններուն մէջ ես ջանացի միւս Աւե-
տարաններու տուած գաղափարները
կարդալ: Բայց օր մը սկսայ հասկնալ
թէ այդ գիրքը ինքնիրեն համար պէտք

է խօսի: Սկսայ զայն իր եղածին պէս
կարդալ, առանց միւս Աւետարաննե-
րու կամ ուրիշ գաղափարներու զիմե-
լու: Եւ այդ օրէն ոկոտալ ան ինծի հա-
մար նօք և աւելի ճոխ գիրք մը եղած
է: Իմ գործս չէ ոեւէ բան փոխել կամ
սրբագրել: Իմ նպատակս է մտիկ ընել
և սորվիլ: Նմանապէս ես սովոր էի Մը-
նընդոց գիրքը կարդալ աչքիս վրայ տ-
չապահներ ունենալով: Գիրքիս մէջ
շատ բաներ կային զոր ես տեսնել չէի
ուզեր: Մէկը ինծի պատմեց թէ Գիր-
քին մէջ ստեղծագործութեան երկու
պատմութիւններ, ջրհեղեղի երկու
պատմութիւններ եւայլն կան: Ես
վախցայ գիրքին մէջ ճիշդ եղածը տես-
նելու, չըլլայ օր իմանանական գաղա-
փարէս ան տարբերի: Բայց այդ գիրքը
ես պէտք էի ձգել: Հիմայ կը ջանամ
կարգալ գիրքը ինչպէս որ է, առանց
ոեւէ բանի աչքերս գցելու, ասոր ար-
դիւնքը ըլլալով ես շարունակ նոր բա-
ններ կը գտնեմ որ զԱստուած ինծի աւե-
լի կը մօտեցնեն: Թողունք որ գիրքը
իրեն համար խօսի, և իր բոլոր պատ-
գամը խօսի: Գիրքին մէջ եղած ոեւէ
բանին դէմ աչքերնիս չգոցենք: Երբեք
մի վախնար տեսնելու ինչ որ իրա-
պէս կայ քու ուսումնասիրած հա-
տուածին մէջ: Բու մերժած բառդ Աս-
տուծոյ տալիք պատգամը կրնայ ըլլալ:

Ըօր թէ Ս. Գիրքը ուսումնասիրելու
համար շատ մեթոտներ կան: Այս գա-
նազանութեան պատճառը՝ Ս. Գիրքի
մասին և մասնաւորապէս անոր ներշնչ-
եալ ըլլալուն իմաստին մասին խորհե-
լու գանազան կերպերու գոյութիւնը
կրնայ ըլլալ: Մէկը Ս. Գիրքի մասին
կը խորհի թէ տառապիօրէն ներշնչեալ
է: Շատ բնական է օր ան ձեռք տուած
հատուածին ճիշդ բառերը մեծ ուշադը-
րութեամբ պիտի ուսումնասիրէ: Ուրիշ
մէկը կը խորհի թէ սորվեցնուած մեծ
ճշմարտութիւնները ներշնչուած են, և

պիտի աշխատի ընդհանրացում ընել և այդ ճշմարտութիւնները գտնել: Աստուծոյ մէջ ունի մէկը կը ջանայ Աստուծոյ իրեն տալիք պատգամը գտնել: Բայց ասոնք տարբեր մեթոտներ կը գործածեն: Տէսակէտի տարիչ տարբերութիւն մը՝ գիրքի մը ինչպէս ներշնչուած ըլլալուն մասին է: Եւ շատ օգտակար կը գտնեմ խորհիլ թէ Աստուած ուղղակի գրողին ձեռքը, գրիչը կամ բառերը իր հակակշռին տակ չառաւ, այլ կը խորհիմ թէ Ան իր կեանքը, սիրտը և հոգին ներշնչեց: Եթէ այս այսպէս է, աւերմն եւ պատգամը կրնամ լաւագոյն կերպով գտնել գրողին իր ըրածը գրած պահուն ճիշդ իր ապրածը, զգացածը և խորհածը գտնելով: Այս կը նշանակէ թէ իւրաքանչիւր գրող ինքզինքը կարգ մը որոշ պայմաններու, դժուարութիւններու կամ կնճառտութիւններու մէջ կը գտնէ, և որոնց՝ Աստուծոյ հոգիին առաջնորդութեամբը՝ լուծումը գտաւ, ահա այս՝ Աստուծոյ ներշնչումն էր իրեն համար, և իր գիրքը այդ փորձառութիւնը կ'արձանագրէ: Մենք պատգամը կրնանք հասկնալ, երբ այդ փորձառութիւնը կրնանք ըմբռնել, կամ առնուազն երեւեկայել: Զօր օրինակ Սաղմոսներու համար ասիկա շատ ճշմարիտ է: Աստուծոյ ոմանք, իրենք իրենց մէջ քրիստոնէական գաղափարները բաժնի տալով: Բայց գրողին փորձառութեան խորը թափանցէ, և ամէն մէկը Աստուծոյ պատգամ մը պիտի բերէ: Այս նպատակի համար աստուծոյ սիրութեան երկու ընդհանուր գիծեր շատ օգտակար կը գտնեմ, որոնք են՝ բոլոր գիրքի մը ուսումնասիրութիւնը և գրողին կամ նկարագրին ուսումնասիրութիւնը: Ս. Գիրքի ուսումնասիրութեան սկսիւնք՝ նախ գիրքերը զատ զատ առնելով:

Գիրք մը ուսումնասիրելու ատեն նպատակը բոլոր գիրքին նպատակը և

պատգամը գտնել է: Ընելիք առաջին թելադրութիւնս է բոլոր գիրքը, եթէ կարելի է մէկ անգամէն, ամբողջութեամբ կարդալ: Ասիկա ընել շատ դիւրին է Աստուածաշունչին շատ մը գիրքերուն համար: Օրինակի համար, Աւետարաններէն մէկը կարելի է կարդալ մէկ կամ մէկ անգամ ժամուան միջոցին: Բայց աւելի երկար գիրքերուն համար կիրակի կէսօրէ ետքի պահը ընտրէ, երբ կրնաս շարունակ երկու երեք ժամ կարդալ և բոլորը մէկէն լմնցնել: Բոլոր Գիրքի մէկէն ընթերցումը ուրիշ ունէ կերպով անկարելի բանը կ'ընէ, այսինքն իբր ամբողջութիւն առնելով բոլոր գիրքին նպատակութիւնը կուտայ:

Երկրորդ, գիրքին այս ընթերցումէն վերջը ջանա՝ իրարու քով բերել գրողին, անոր նկարագրին, նպատակներուն և փորձառութեանց մասին գիտցածներդ: Միևնոյն ատեն տես թէ գիրքը գրելուն նպատակին մասին ունէ նպատակութիւն մը կ'ստանա՞ւ: Միտքին մէջ հեղինակը ի՞նչ մեծ գաղափար մը ունէր գիրքը գրելու ատեն: Երբեմն ասիկա շատ մը խօսքերու մէջ յայտնուած պիտի գտնես (տես Յովհ. 20-31): Երբեմն մէկ ընթերցումը կը բաւէ յստակօրէն ցուցնելու մասնաւոր նպատակը (տես Փիլմ. 10): Երբեմն ալ այնչափ դիւրին չէ: Բայց բանական է խորհիլ թէ ոչ մէկ մարդ գիրք մը գրելու պիտի ձեռնարկէր առանց իր միտքին մէջ մեծ գաղափար մ'ունենալու: Եւ եթէ մարդ մը գիրք մը գրելու համար Աստուծոյ ներշնչուած է, անոր շարժառիթը հասկնալ անկասկած մեղի համար գերագոյն կարեւորութիւն ունի:

Կարեւոր է նաեւ ստանալ այս հարցին մասին արտաքին աղբիւրներէ կտրելի լոյսը: Աստուածաշունչի ուրիշ գիրքերը, Ս. Գիրքի ուսումնասիրութեան

մասին գրուած գիրքեր, մեկնութեանց գիրքեր, եայլն շատ օգտակար կրնան ըլլալ գիրքի մը ուսումնասիրութեան շիտակ սկսելու համար: Հեղինակին գլխաւոր գաղափարը կամ նպատակը ըմբռնելէ ետք միայն մենք պատրաստ կ'ըլլանք ետ երթալու և գիրքէն իւրաքանչիւր մասը ուշադրութեամբ ուսումնասիրելու և ընդհանուր ծրագրին մէջ իւրաքանչիւր մասին տեղը գտնելու: Այս մանրակրկիտ ուսումնասիրութիւնը տարբեր գիրքերու մէջ մեծապէս պիտի տարբերի: «Նոր Աւետարան» իրաւորութիւն քանի թիւերուն մէջ կը յուսամ Աստուածաշունչի գիրքերէն նմոյշներ առնել և իւրաքանչիւրին ուսումնասիրութեան օգնելու համար կարգ մը թելադրութիւններ ընել:

Հ. Հ. ՐԻԿՍ

ԿԵԱՆՔԻ ՆՇԱՆԱԿՈՒԹԻՒՆԸ

Մէկը ըսած է թէ երկրաւարդութիւնը սայթաքում մէ, չափահասութիւնը՝ պայքար մը, և ծերութիւնը՝ զիջւած վիշտ մը: Եթէ այս շիտակ է մենք աւելի բարեբախտ եղած պիտի ըլլայինք եթէ ծնած չըլլայինք: Կեանքի բանական մէկ փրկիսօփայտութիւնը չէ այս, որուն հակառակը շիտակ է: Երկրաւարդութիւնը պատահականութիւն մէ, չափահասութիւնը՝ մեծագործութիւն մը, և ծերութիւնը՝ սուրբ յիշատակ մը:

Կեանքի գաղտնիքը պատճառ եղած է որ մարդկային միտքը միջանի տեսութիւններու ծնունդ տայ: Ոմանք կ'ըսեն թէ կեանքը ախտ մըն է՝ զոր մահը միայն կրնայ դադարեցնել: Ուրիշներ կը յայտնեն թէ կեանքը պայքար մըն է՝ օրուն մէջ պարտութեամբ մարդն է: Ոմանք կը հաւատան թէ կեանքը մանկապարտէզի նման բան մըն է՝ ուր

մարդիկ զԱստուած գիտնալ կը սորվին: Ուրիշներ կ'ընդունին թէ կեանքը փորձառութեան պարոյց մըն է՝ Եւր մարդեր կը սորվին Աստուծոյ ճամբաները գիտնալ և Անոր հետ հաղորդակցութեան գալու մէջ մեծնալ: Ուրիշ շատեր գտնացած են սա գաղափարով թէ կեանքը լատակ մըն է անձնաւորութեան շէնքին համար և երբ շէնքը կ'աւարտի լատակը կը վերցուի և կեանքի պորձին գեղեցկութիւնը կ'երեւնայ:

Կեանքին իմաստին մասին մեր հարցումին պատասխանելու համար մենք միջանի բաներ պէտք է ընդունինք: Պէտք է ընդունինք թէ մարդուն պատճառը և վերջին նպատակը անոր Արարիչին մէջ է, ճիշդ ինչպէս որ ունէ մէկ գիւտին պատճառը և նպատակը անոր գիւտարարին միտքին մէջ է: Թէ հունաւորը իր լրացումը կը գտնէ անհունին մէջ, ինչպէս որ կաղինը ինքզինքը կը լրացնէ կաղնիի մէջ: Թէ մենք կեանքը մեզմէ վեր մեզմէ հեռու տեղ մը կը գտնենք, թէ այդ Վիերը և զհեռուն ուրիշ բան չէ այլ Աստուած և թէ ժամանակաւոր կեանքը անմահ կեանքէն անջատ ըլլալով իմաստ չունի:

Կեանքը պէտք է նկատուի Աստուածածային արտայայտութեան ճամբայ մը: Կարգ և գեղեցկութիւն, Աստուծոյ շատ մը ստորոգելիներէն երկուքը, կ'արտայայտուին նիւթական տիեզերքի և բընական օրէնքի մէջ: Բայց «կամքը» կրնայ արտայայտուիլ միայն ազատ բարոյական ազդակներու, պարտականութեան զգացումի միջոցաւ, որ չի գտնուիր քիմիական, թուագիտական, աստղագիտական աշխարհներու մէջ: Բնական օրէնքի մէջ աստիճանականութիւն» մը կայ, իսկ մարդու մէջ ապարտականութիւն» մը: Կեանքը կը նշանակէ ստեղծագործ անձնաւորութեան բարեշրջումը: Անձերը ուրիշ անձերու

“ՆԱՀԱՏԱԿԱՅ” ԵԿԵՂԵՑԻՒՆ ԿԱԶՄՈՒԹԵԱՆ ԱՌԹԻՒ

Բ.

ԻՐԱՐ ԵԿԵՂԵՑԻ ՄԵՐ ՊԱՐՏԱԿԱՆ ՈՒԹԻՒՆՆ ԸՆԴՈՑՈՒՄԸ

ՄԵՐ ԿՈՑՈՒՄՆ Է ՅԻՍՈՒՍԻ ՄԱՍԻՆ ՆՈՐ ԲԱՆԵՐ ԳԻՏՆԱԼ, ՆՈՐ ՀՈԳԵՒՈՐ ՓՈՐՁԱՌՈՒԹԻՒՆ ՈՒՆԵՆԱԼ, Առաքեալները իբր թէ Յիսուսը գիտէին: Բայց անոնք լեռէն իջնալու ատեն բոլորովին նոր բան մը սորվեցան: Յիսուս ա՛լ անոնց համար Աստուած եղած էր որ մարդու կերպարանքով կը պտրտէր: Անոնց գաղափարին համեմատ մեծագոյն կրօնական առաջնորդներու, Մովսէսի և Եղիայի, փառքը անոնց առջև մարեցաւ: Ո՛րչոքիւր սա իմաստալից խօսքին. «Աստուծոյն նայեցան, ալ եւրիշ մէկը չտեսան, հապա միայն Յիսուսը իրենց հետ» (Մարկ. 9. 7.) Եկեղեցիի կազմութեան մէջ տեսնելիք և ցոյց տրուելիք ամէն բան, ամէն մարդ պէտք է անհետանայ, ինչպէս որ արեւի ծագումովը բոլոր աստուծոյն ներքինը կ'ըլլան: Քրիստոսի և Եկեղեցիի սէրը պէտք է ամէն բան իր մէջ հալեցնէ: ՄԻԱՅՆ ՅԻՍՈՒՍ: Բարի եկաք ահա այս նշանակէտին ձգտելու համար:

ՄԵՆՔ ԿՈՑՈՒՄԸ ԵՆՔ ՅԻՍՈՒՍԻ ԱՌՁԵՒԸ ՆՈՐ ԴԻՐՔ ՄԸ ԳՐԱԻԵԼՈՒ: Անոր մօտիկ ընել: Երկնային ձայնը «Անոր մօտիկ ըրէք» ըսած էր: Անկասկած ա-

հետ ընկերակցութեամբ կը զարգանան, և կեանքը՝ սիրոյ, գութի, խոնարհութեան և այլնի նման անձնական արժէքներու ստեղծումը և պահպանումն է: և անոնց պահպանումը շիտակ կ'առաջնորդէ դէպ ի անխախտութեան:

ՏՐ. ՀԱՐՑԼԸՐ

չակերտները Յիսուսի հետ մտերմօրէն կը խօսակցէին: Շատ անգամ զԱյն կանխելով կը յանձնարարէին թէ օրով վրայ պէտք էր կրակ տեղացնել, անօթի ժողովուրդը ե՞րբ պէտք էր արձակել, և թէ ո՞ր տաղաւար չինելով պէտք էր բնակիլ: Նոյնպէս երբ Յիսուս յայտնեց թէ ինք պէտք էր սպաննուիլ և յարուցիւն առնել, «Պետրոս մէկդի առաւ զԱյն և սկսաւ յանդիմանել» ինչպէս որ կը կարդանք Մատթ. 16. 22ին մէջ: Ի՛նչ զարմանալի յանդիմանութիւն: Բայց կը կարդանք որ երբ «Անոր մօտիկ ըրէք» հրամանը լսեցին «երեսնին վրայ ինկան ու խիստ վախցան» և զլուռ կեցան: (Մատթ. 17. 6, Ղուկ. 9. 36): Պատկառանքի զգացում մը գիրենք համակած էր: Եկեղեցիի մը կազմութիւնը ի՛նչ ակնածելի լուրջ գործ մըն է: Բոլոր աշխարհ կը խնդայ գոռն լուռ մօտիկ կ'ընես, բոլորը կ'ուսեն ու կը խմեն դուռն Եղիայի նման ծնրադիր կրկնակի աղօթքներով անձրեւ կը խնդրես: Աստուծոյ և մարդու մէջտեղ կենալը (Եզկ. 22. 30, Սաղմ. 106. 23): Բի՛մ պահպանութեան տեղը պիտի կենամ, . . . ու պիտի սպասեմ որ տեսնեմ թէ ինծի հետ ի՛նչ պիտի խօսի» (Ամբ. 2. 1.) Թարգմանիչը խօսելէ առաջ պէտք է մօտիկ ընէ, եթէ ոչ ըսելիք չունենար: Ուստի Եկեղեցիին մօտիկ ընելու կոչուած է: Ահա այս շնորհը ստանալու համար բարի եկաք,

ՄԵՆՔ ՀՐԱՄԱՆԻ ՄԸ ՀՆԱԶԱՆԴԵԼՈՒ ԿՈՑՈՒՄԸ ԵՆՔ ՅԻՍՈՒՍԻ ԴԵՐ ԽՈՍԻՔԻ ՁԱՐ-

ժանալի պատուէր մը չէ՞ այս Բրիտանիան պարտական չէ՞ յարմար կամ անյարմար ատենին խօսելու Բայց կը տեսնենք որ հոգեւոր փորձառութիւնը ամէնէն աւելի խնայողութեամբ պէտք է գործածուի։ Եօթը տարուան հին գինիին ման քամուած և մրուրը առնուած պէտք է ըլլայ։ Ամէն գիտցուած նոր բան, ժանաւանդ հոգեւոր փորձառութեան մէջ, կ'երիտասարդացնէ մարդը, իսկ երիտասարդութեան փորձութիւնն է խօսիլ, առաջին անգամ խօսիլ, չատ խօսիլ և ամէնուն խօսիլ։ Երիտասարդը կը խորհի թէ ամէն բան գիտէ, ամէն թերութիւն կը տեսնէ, ամէնը կրնայ կրթել։ Այս ինչպէս որ փորձութիւն մըն է երիտասարդի մը համար, նոյնպէս փորձութիւն մը կրնայ ըլլալ երիտասարդ եկեղեցիի մը համար, Դպիթ կ'ըսէ. «Երեքովի մէջ նստեցեք մինչեւ օր մօրուքնիդ աճի» (Բ. Թգ. 10. 5)։ Ուրիշ եկեղեցին միշտ պէտք է լուռ կենայ։ Մարդու մի պատմէք, մինչեւ օր Որդին Մարգոյ մեռելներէն յարութիւն առնէ։ (Մար. 9. 8)։ ՅԻՍՈՒՍ ԲՈՒ ՄԷՋԴ ԵԱՐՈՒԹԻՒՆ ԱՌԱՊԻ, Յիսուս աւելի ըլլալով կ'ըսէ. «Երուսաղէմէ չհեռանալով սպասեցէք ձօրը խոստմունքին... հոգեւոյն Սրբոյ ձեր վրայ եկած ատենը զօրութիւն պիտի առնէք» (Գործք. 1. 4-8)։ Շրջան մը կայ երբ եկեղեցին լուռ մնալով կրնայ զօրանալ։ Արդ՝ բարի եկաք այդ լուռութիւնը և զօրութիւնը վայելիլու։

Ս. ՀՈԳԻՒՆ ԳԱԼՈՒՍԸ ՄԵՐ ՄԷՋ ՄԵՂԻԹԻ ՀԱՆԴԷՊ ՍԱՍՏԻԿ ԶԳԱՅՆՈՒԹԻՒՆ, ԶՂԱԳՐԳՈՒԹԻՒՆ և ՍՏԵԼՈՒԹԻՒՆ ԵԱՐԱՋ ԿԸ ԲԵՐԷՄԵՐ անձին հետ յարաբերութեան գալով՝ «մեր մարմինը ճնշելու զայն նուաճել» տեսական կանոն պիտի ըլլայ (Ա. Կորն. 9. 27)։ «Արիւն քալելու չափ պատեցաք ինչպէս հակառակ պիտի կենանք (Եբր. 12. 4)։ Ուրիշներուն հետ յարաբերութեան գալով՝

յարգանքով և սիրով պիտի ըսենք թէ յարգելի նիկողիմոս պէտք է վերադառնան (Յովհ. 3. 3, 5), թէ զիտուելու Առաւելոյ թագաւորութենէն հեռու չէ (Մար. 12. 34)։ Նոյնիսկ եղբայրներու հետ յարաբերութեան գալով՝ բարոյական քաջութիւն պիտի ցուցնենք, ինչպէս որ Պօղոս տեսնելով որ Պետրոս կեղծաւորութիւն կ'ընէ ԲՈՂՈՐԻՆ ԱՌՋԵՒ ԶԱՅՆ ԵԱՆԴԻՄԱՆԵՑ, հակառակ անոր որ Պետրոս գինքը կանխած էր առաքելութեան մէջ։ Քանզի մեղքի չափանիշը պիտի փոխուի, պոռալ իսկ մեղք պիտի նկատուի։ «հաւատքէ չեղող», «սէրէ չեղող ամէն բան մեղք» պիտի նկատուի։ Մէկ խօսքով մեղքի հանդէպ անաչառ դիրք պիտի առնենք։ Արդ՝ բարի եկաք այս դիրքը զրաւիլու։

Այս ոյժով օծուած եկեղեցիին մէջ ԱՒԵՏԱՐԱՆԶԱԿԱՆ ՈՐԻ ՊԻՏԻ ՏԵՍՆՈՒԻ Կ'ըսուի թէ աշխարհիս որ մասէն օր գետինը փորեն աչ կամ կանուխ կրանիթի խաւերու պիտի հանգիպին։ Եկեղեցին պիտի որ, ամէն «մարդ Աստուծոյ պատկերովը ստեղծուած է» և «Աստուծոյ զայն իր արիւնովը ստացած է» (Գործք. 20. 28)։ Ամէն մարդուն յոյսով կը նայի, ամէն մեղաւորին համարձակութեամբ կը խօսի։ Այս լայնի և համարձակութեան բանալին խօսողին հոգեւոր փորձառութիւնն է։ Եւ կը վկայէ թէ «Այն օր զիս անգամ փրկեց, քանզի ինչպէս փրկեցի, և չկայ մէկը զոր չկարենայ փրկելիլ»։ Ահա բարի եկաք այսպիսի աւտարանչական ծառայութեան։

ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ, ՈՒՐԱԽՈՒԹԵԱՆ, ՍԻՐՈՅ, ԱՌԱՏԱԶԵՆՈՒԹԵԱՆ ԵՒԱՅԼԸՆԻ ՄԱՍԻՆ ԶՃԱՌԵՄ, ոնոնք այսպիսի եկեղեցիի մը մէջ պիտի երեւան գան։ Սա շիտակ է որ շատ փափուկ գործի ձեռնակած ենք։ Որչա՛փ սուրբ է մեր կօխած վայրը։ Մենք ստիպուած ենք Մովսէսի նման «մեր ոտնամանները հանելու», և Յակոբի նման

զայն «Աստուծոյ Տուն (Բեթէլ) և երկընքի դուռ» կոչելու: Աստուած կը փափագի եկեղեցիի միջոցաւ տեսնուիլ և աշխարհն ալ կը փափագի զԱյն տեսնել: Այնպէս որ եկեղեցին է այն կազմակերպութիւնը որ Աստուծոյ և աշխարհի միջև կը կենայ, երկու կողմէրուն յոյսին առարկան է և վերջին ծայր քննութեան ենթակայ: Ահա այս է օրհրան վրայ կեցած ֆաղափր: Պողոս կ'ըսէ. «Տեսարան եղանք աշխարհի, հրեշտակներու և մարդերու: Սուրբից մէջ մեր դիրքը այս է: Պատահմամբ չեկանք այս երկրորդ: Մենք այս երկրին օխաղաղութիւնը փնտռելու» (Երեմ. 29.7), զայն լուսաւորող լոյս և անոք համ տուող աղ ըլլալու, անոր ծառայելու համար քննուած մարդիկ ենք: Մենք ընտրուած ենք Անտեսանելին տեսնելու և ցոլցնելու, Անոր բերնէն լսելու և զայն լսելի ընել տալու համար (Գործք. 22.14, 15): Մեր կոչումն է պարտականութիւն զգալ ոչ թէ մէկ ազգի կամ մէկ երկրի համար, այլ բոլոր ազգերու և աշխարհի համար, և ջանք թափել Աստուծոյ թագաւորութեան գալուստին համար: Յայտնի է որ մեր նպատակը ազգային, քաղաքական, անտեսական և ընկերային ըլլալէ շատ բարձր է: Մենք ԿԻԿԵՆԱՆՔ ՄՄԷՆ ՄԱՐԶԻ ՀԱՄԱՐ ՀՈՒՆԻՈՐ ՄԱՐԴԵՐ, ԱՍՏՈՒԾՈՅ ՄԱՐԴԵՐ ՊԱՐԱՍՏԵԼՈՒ ՀԱՄԱՐ: Բոլոր կազմակերպութեանց մէջ եկեղեցին է այն միակը՝ որ սխալ գործածուելով ամենամեծ վնասներ կրնայ պատճառել, բայց օր իր գոյութեան նպատակին հաւատարիմ մնալով, նաեւ մեծագոյն ծառայութիւն կրնայ մատուցանել: Մենք նպատակ չունինք մէկ եկեղեցիէն կամ մէկ ազգէն օւրիշին մարդ փոխադրել: Եթէ աջ ձեռքին մէջ եղածը ձախը առնէ՝ մարդ բան մը չի շահիր: Բայց եթէ այդ երկու ձեռքերը մէկ տեղ աշխա-

տին և վարձք ստանան մարդ այն ատեն բան մը շահած կ'ըլլայ: Ամէն ազգի և եկեղեցիի մարդը իրեն թող մնայ, բաւ է որ Աստուծոյ և մարդոց հետ, մեր պարտականութեանց և արտօնութեանց հետ ներգաշնակ ապրելով մարդոց քաջակէնք այսպիսի ուժ տուող էակը:

Բարի մարդոց գնորդ ալ չենք: Ամէն կրօնքի և ամէն երկրի մէջ բարի մարդիկ գտնուած են: Բայց մեր նպատակն է նոր մարդեր, ամէն օր նորոգուող մարդեր ըլլալ, բոլոր և տեական ազգեցութիւններ ներշնչել: Մարդ կը մեռնի, սակայն ազգեցութիւնը անմահ է: Պողոս մեռած է, բայց 2000 տարիներէ ի վեր միլիոնաւոր մարդիկ անոր ազգեցութիւններէն օգտուած են և պիտի օգտուին: Մեր այս վկայութիւնը հաստատուելու կամ հերքելու համար արտաքին վկայի պէտք չունինք: Իմ մեկնիչս ես եմ: Եթէ դուք զիս չկրցար հաւանալ, ուրիշէն բացատրութիւն մի՛ պահանջեր: Կեանքը՝ ծածուկ ներքին ապրումներուն անհերքելի վկան է: Լեռնէն վար իջնող Մովսէս իր զէմքին պայծառութեամբ անդիտակցաբար յայտնեց թէ ոքուն հետ տեսնուած է: Քրիստոս ծածկող Աստուած» (Ես. 45. 15.) հաւատացեալներու միջոցաւ մարդկութեան կ'ուզէ տեսնուիլ, ինչպէս որ գիշերը շտեմնուող արեւը իրեն նայող լուսնի միջոցաւ մեզի կը տեսնուի: Ուստի մինչ Աստուծոյ և մարդոց մէջ կը կենանք՝ ատրպուած ենք մեր դիրքին ու շարքութիւն ընելու զԱյն շիտակ և լման կերպով ցօլացնելու համար: Աօրկալը նողկներ եթէ թիւով քիչ ալ ըլլան, Աստուած անոնց կ'ըսէ. «Մի՞ վախճար, պզտիկ հօտ, վասնզի ձեր Հայրը հաճեցաւ որ թագաւորութիւնը ձեզի գայ» (Ղուկ. 12. 32): Ուրեմն կ'ըսեմ. բարի եկաք այն պզտիկ հօտին որ վերջապէս թագաւորութիւնը պիտի ստանայ: Վերջ (ՎԵՐ.) Ս. Ս. ՄԱՆՈՒԿԵԱՆ

ՀԱՅ ԵԿԵՂԵՅԱԿԱՆ ՀԱՅՐԵՐ

8

ՄՈՎՍԷՍ ԽՈՐԵՆԱՑԻ

Ազգային և եկեղեցական պատմութեանց ամէնէն զարմանալի դէմքերէն մին ալ այս: Ծնած Տարոնի ինքնի գիւղը՝ ոմանք զայն Ս. Մեօրոպի քեռորդին կը նկատեն, ապրեցնելով զայն Ե. Դաւթի մէջ, իսկ Եւրիչներ կը տարաբերեն անոր կեանքը, Զ-Ժ դարերու միջև, զանազան դէպքերու և դէմքերու հետ կապելով այս անթափանցելի և խորհրդաւոր գիտնականին անունը:

Պատմութիւնը կը ճանչնայ զայն իբր մին կրտսեր թարգմանիչներէն, որոնց հանդիպեցանք արդէն մեր այս յոգեւածաշարքին սկիզբները և որոնք արտասահման զրկուեցան, ուսանելու և մայր երկրին օգտակար դառնալու առաջադրութեամբ:

Խորենացի՝ երկու վեցեակ տարիներ և աւելի շրջած է Եդեսիա, Անտիոք, Երուսաղէմ, Աղէքսանդրիա, Պոլիս, Աթէնք և Հռոմ, ուր կը գտնուէին ժամանակին բարձրագոյն ուսումնարանները, աշխարհահռչակ ուսուցիչներու առաջնորդութեան տակ: Այնպէս որ, անիկա հմուտ գիտնական մը, շերմ քրիստոնեայ մը և գիտակից վարդապետ մը դարձաւ քրիստոնէական կրօնին: Եւրջած երկիրներու աստուածաբաններուն և գիտնականներուն հետ ունեցած սերտ կապակցութեան և շնորհիւ իր մէջ յաւերժանապէս վառուող ուսանելու փափաքին, այն՝ Հայութեան համար եզակի դէմք մը պիտի ըլլար և ոչինչէն կամ չնչին ատաղձներէ հոյակապ կոթող մը պիտի կանգնէր Հայ պատմութեան համար: Այն արդէն տիրապած էր երկու

փառաշուք անուններու, պատմահայր և քերականահայր տիտղոսներուն, որոնք Եւրիչ Երեմէ մէկու շնորհուած չին մեր երկեսուն դարերու պատմութեան մէջ: Թէ ի՛նչպէս արժանացաւ այս պատմաւորներու, տեսնենք:

Խորենացի անդալ գրող մը եղած է, ինչպէս նաև թարգմանիչ: Իր անուան պանծացումին պատճառ դարձած է անոր «Պատմագրութիւնը», երկ մը որ օտար բանասէրներու ալ աշխարհութեան առարկայ դարձած ըլլալով, թարգմանած է շատ մը եւրոպական լեզուներու:

Գիրքը կ'սկսի հայոց ծագումէն և կը վերջանայ Տրդատի մահէն դար մը վերջ, ընթանալով Ս. Գրոց հետեւողութեամբ՝ առանց տարուելու օտար մեկնաբաններու տեսակէտներէն: Այս երկին իրական արժէքներէն մին կը կազմէ սա՝ պարագան որ, Խորենացի՝ միշտ յարաբերական կապ մը պահեր է հայ ժողովուրդին և դրացի ազգերու կեանքերուն, բարքերուն, սովորութեանց և փոխ յարաբերութեանց միջև:

Անիկա հինգ գլխաւոր աղբիւրներէ կը քաղէ իր ծանօթութիւնները: Ա. Յունական անգիր և գրաւոր մատենագրութենէն, Բ. Ասորի և Պարսիկ աղբիւրներէ, Գ. Եդեսիայ, Մծբինի և Սիւնոպի մեհենական երկերէն, Դ. Բաղդէական աղբիւրներէ և հայկական անհամար ակերէ, ժողովուրդական զրոյցներէ, երգերէ, աւանդութիւններէ, վէպերէ և այլն և այլն: Այնպէս որ՝ այս անխոնջ գիտնականը զիմեր է ամէն ծագելի, վազեր է ամէն հովիտ, գտնե-

լու համար բոյր մը, հիւթ մը, նիւթ մը և միացուցեր, համագասեր օւ տուեր է մեզ՝ իր տեսակին մէջ աննման երկ մը, բազմազան և զարմանազան տեղեկութիւններով, հակառակ կարգ մը մը-թին էջերու և ժամանակագրական օր-խալներու, օրոնք շատ բնականօրէն ներելի պիտի համարուէին անշուշտ. նկատի ունենալով ժամանակի ընձեռած տուեալները, բազմազար գծուարութիւնները և նմանօրինակ գործի մը և նախընթացաբար երեւան եկած չըլ-լալու պարագան:

Զկայ հայ թէ օտար (մասնաւորաբար մերձաւոր ազգերու յատուկ) նիւթ մը, կրօնական, պատմական, աւանդական, վիպասական, ժողովուրդական զը-րոյց, երգ, աշուղական տաղ և այլն և-այլն, որոնցմէ ճառած և պատմած չըլ-լայ հայ ծերունի պատմահայրը, յաճախ զուարթ և նկարագրիկ լիզուով մը: Իր բոլոր գործերուն մէջ ջերմեռանդ քրիս-տոնեայի և խանդավառ ազգասէրի մը շունչը կը օսւառնի միշտ:

Իր այս հռչակաւոր երկէն զատ օւնի նաեւ քերթողական հոյակապ գործեր, օրոնցմէ ամէնէն հռչակաւորն է իր օղ-բը «Ողբամ զքեզ Հայոց Աշխարհ . . .» զոր զրի առած է, արտասահմանէն հայրենիք վերադարձին, երբ երկիրը պարսկական հալածանքներու, պատե-րազմներու և աւերածութեանց տակ ող-բալի կայութեան մը ենթարկուած էր, երբ իր վաղեմի բարեկամներն ու դաս-տիարակները մահացած էին և ամէն ինչ յուսահատութիւն սուգ ու շիւտ կը բու-րէր:

Ահաւասիկ, ա՛յս տեսակ ոչ ձեռնառւ պայմաններու տակ է որ՝ մարդ կը մեծ-նայ, կամ մեծ մարդը նրեւան կուզայ: Այսպէս էր պարագան Մ. Խորենացիի համար, որ գիտցաւ՝ օղբալ և միանգա-մայն անկէ շատ աւելի ազգասիրաբար և եռանդով գործել, օքնիլ, գրել և ճա-

ռել, որ գիտցաւ՝ անիծելու ճեղ գոխեմ բախտը՝ աշխատանքին կոթնից, բախտին ի-րեն զրացածը, իր ճիգերուն միջոցով ձեռք անցնելու: Եւ յաջողեցաւ:

Բոլոր հեղինակներ կը վկայեն նաեւ որ, Խորենացի եղած է անկողմնակալ և անաչառ պատմող մը: Երբ Եղիշէ կը կառչի գովաբանելու Մամիկոնեան ըն-տրեալ նախարարութիւնը և իր գրչին տակ միւս նախարարութիւններ տեսակ մը ստուերամած վարագործի տակ կու-գան ապարէզ, Խորենացի կը պահէ զի-տական մտքի մը յառուկ արգարմը-տութիւն և կը պահէ իրեն ու իրողու-թիւնները, ինչպիսիս ուր ևս և ինչպէս որ կ'ըմբռնէ զանոնք իր մաքուր հոգիով:

Խորենացի եղած է անկեղծ գրող մը, ձաղկող բոլոր պակասութիւնները որոնք գոյութիւն ունէին հայոց մէջ: Այն անկիստ քննադատը հ իր նախորդնե-րուն և ժամանակակիցներուն անուու-թիւնը և միշտ հայութեան աչքին ներ-կայացուցեր է պատկերը յայն ազգին որ, փառահեղ շրջաններ կը բոլորէր Ե. դարուն, արուեստի, նկարչութեան, թատերգութեան և այլ քաղաքակը-թական վերելքներու շաղիւն մէջ:

Անիկա քաջ և իրաւես հայրենասէր մըն էր, հաւատացող՝ որ ազգին իրա-կան փրկութիւնը մտաւոր և հոգեւոր զարգացման ու յառաջդիմութեան մէջ կը կայանար, ոչ թէ վրէժխնդրական պայքարներու և արիւնհեղութեանց մէջ, օւր ընկղմած էր Հայաստան բազ-մաթիւ տարիներէ ի վեր և որոնցմէ տուած էր չարաչար:

Ահաւասիկ անոր նկարագրին ընդ-հանուր գիծերը, որոնցմէ կրնանք օգ-տուիլ նաեւ մենք, ներկայիս, որ կ'ապ-րինք ցրուած աշխարհի չորս ծագերը և զկ'օղբանք զմեր հայոց աշխարհ:

Հայկա

ՌԵՏՈՒՆԻ

ՓՈԻԼԱՆՈ ԻՆՉՊԷՍ ԻՐ ՃԱՄԲԱՆ ԿՈՐՄՆՅՈՒՅ ԵՒ ԱՐԴԻԻՆՔԸ ԻՆՉ ԵՂԱԻ

Այս պատմութեամբը երեսուն տարի առաջ պատահած է։ Ամառուան սկիզբը, Ֆուլանո շիւսիսային Ափրիկէի մէջ Ալճեր քաղաքէն տասներկու մղոն հեռու եղող գիւղերու մէջ կ'աշխատէր Տասն օրէ ի վեր հոռ հոռ իր գիրքերով ի պայուսակով այցելած և անոնցմէ շատերը ժողովրդին ծախել յաջողած էր։ Օրը շաբաթ ըլլալուն, կը մտադրէր Ալճեր վերագառնալ կիրակին իր ընտանիքին քով անցունելու համար։ Ծրագրեց որ կանուխէն ճամբայ ելլէ, բայց որովհետեւ շատեր իրեն հետ այն գիրքերու մասին խօսիլ կը փափաքէին զորոնք իրմէ պնած էին, հազիւ կէս օրէ հտք ուշ առնէ կրցաւ ճամբայ ելլել։

—Պէտք է անապարեմ, ըսաւ ինքն իրեն, եթէ ոչ մուրը կոխելէն առաջ չպիտի կրնամ տուն հասնիլ։

Պայուսակը, ուսը նետած օր գրիթէ պարապ էր, Ֆուլանո Ալճերի ճամբան բռնեց։ Պէտք է ըսել որ ինքը այդ կողմերուն ճամբաները լաւ չէր գիտեր և առկէ առաջ այս տեղէն անցած չէր։ Հետզհետէ հասաւ տեղ մը ուր արահետ մը մէկէն մեծ ճամբէն գէպի ձախ կը ծռէր և շիտակ կ'ընթանար։

—Եթէ այս ճամբան առնեմ, խորհեցաւ Ֆուլանո, ժամանակ կը շահիմ քանի որ բաց է ի բաց կ'երեւնայ թէ անկիւն մըն է որ կը կտրէ։

Իսկայն այս ճամբան խորհովիտի մը մէջ մտաւ ուր բարձր և սեւ ծառեր կային։ Նոյն միջոցին արեւը մարը մտած և գիշեր եղած էր։ Ծամբու ոչ մէկ հետք կ'երեւնար։ Վեր երկինք շայիւով Ֆուլանո աստղերէն կը հասկնար թէ գէպի հարաւ՝ Ալճերէն հեռու կ'երթայ։

Այլեւս հասկեցաւ թէ սխալած էր և օտարութեամբ բոլոր գիշերը առանց կրա-

կի, վերմակի և կերակուրի անտառին մէջ պիտի մնար։ Ասոր համար ծառերի եկաւ և խնդրեց Աստուծոյ օր գիշերը պահպանէ։

Երբ ոտքի ելաւ ձայն մը լսեց։ Ուշադրութեամբ մտիկ ըրաւ։ Այո, ձայնը կարծր ճամբու մը վրայ ձիու մը արմալներուն կանտնաւոր զարկն էր։ Մօտ և աւելի մօտ հկաւ բայց յետոյ մեղմանալով կարծեա թէ ճամբան գէպի ձախ կը խոտորէր։ Միակ բանը որ ընելու էր պէտք էր պոռալ։ Եւ Ֆուլանո կրցածին չափ բարձրաձայն պոռաց.— «Օգնութիւն, օգնութիւն» և որովհետեւ չէր գիտէր թէ որուն է օր կը կանչէ, քանի որ Ալճերիոյ մէջ քանի մը լեզուներ կը խօսէին, օգնութիւն կանչեց ֆրանսերէն, իտալերէն, Սպաներէն և Արաբերէն լեզուներով։

Ձիուն սմբակներուն զարկը զաղրեցաւ և ձայն մը մօտիւն մէջէն լսուեցաւ որ կը կանչէր. «Ո՞վ կայ հոս»։

Ֆուլանո խաւարած անտառը մը խրճուելով ձայնին հկած կողմը յառաջացաւ և քիչ վերջ ինքզինքը լայն ճամբու մը մէջ գտաւ։ Նորէն կանչեց և աւելի մօտէն պատասխան ստացաւ։ Աւելի յառաջ գնաց մինչեւ որ ձիուն ոտքերուն վարնուեցաւ որուն հեծեալը երկայնահասակ և երկայն վերաբրկուի մը մէջ փաթթուած մարդ մըն էր։

—Ի՞նչ ունիս, հարցուց ձիււորը։

—Ոչինչ, պատասխանեց Ֆուլանո, մի միայն ճամբան կորուսել։

—Ժամանակը չէ որ այդպէս միօ միօնակ անտառին մէջ թափառիս։ Դուն երբէք ընծառիւծներէն և գիւղերէն չե՞ս վախնար։ Երթալիք տեղդ ու՞ր է։

—Իմ տունս Ալճերի մէջն է։

—Այս գիշեր հոն չես կրնար հասնիլ։

Բեզի պիտի թելադրէի որ այս ճամբէն
երթաւ մինչեւ Սպանիացի ածխագործ-
ներուն տաղաւարները: Ես անկէ
փարսախ մը հեռուէն անցայ: Անոնք
քեզի պառկելու տեղ մը կուտան:

—Շնորհակալութիւններ, ահա կ'եր-
թամ:

—Մնաց բարի... եւ ձիաւորը քշեց
ձին և անհետացաւ:

Ֆուլանո ճամբուն վրայէն արագօրէն
քալելով շատ չ'անցած ծառերուն մէ-
ջէն լոյս մը տեսաւ: Երբ մօտեցաւ կե-
ցաւ և գոչեց:

—Ընկերներ, ես կտրուած ճամ-
բորդ մ'եմ, կրնամ յառաջ գալ:

—Թառչացի՛ր, պատասխանեցին կը-
րակին շուրջ նստած մարդիկ:

Անոնք թաքի ելան և Ֆուլանոն դէ-
պի լոյսը առաջնորդեցին: Տեսան որ
նա յօգնած էր և իրեն ուտելու և խմե-
լու քիչ մը բան տալին և որեւէ հար-
ցում չ'ըրին մինչեւ որ բաւականաչափ
չի հանգստացաւ: Հոն մարդիկ, կիներ
և մանուկներ կային, բազմութիւն մը
որոնց ամէնքն ալ կոչօրէն հազուած
և խոտէ շինուած տաղաւարներու մէջ
կը բնակէին: Սակայն ասոնք ալ ռարիշ
Սպանիացիներու նման բարեացակամ
և հիւրասէր մարդիկ էին:

Քիչ յետոյ խօսակցիլ սկսան:

—Ընկեր, գուն Սպանիացի՛ ես,
հարցուց ծեր մարդ մը որ կ'երեւնար թէ
խումբին պեան էր:

—Այո, ըսաւ Ֆուլանո, և Հուսքա-
յէն եմ:

—Հուսքա... Այսպէս ուրեմն ճա-
քան ալ գիտեա:

—Ինչպէ՞ս չեմ գիտեր, իմ կիսնայն-
տեղէն է:

Այս մարդիկը Պիրենեան վիթխարի
լեռներու շուրփին տակը եղող ձաքա-
քաղաքէն էին ուրկէ տարիներ առաջ
գաղթած էին:

—Եւ վերջին անգամ ե՞րբ Սպանիան

տեսար, հարցուց առաջնորդը:

—Անցեալ ամսին ես հոն էի և շատ
չ'եղաւ հոս այս երկիրը գալուս:

Ամէնքն ալ չափէն աւելի ուրախ ե-
ղան բարեւելու մէկը որ կարող էր ի-
րենց հայրենիքի մասին լուրեր տալ:
Հեղեղանման հարցումներով ողողեցին
վայն: Այնպէս ըրին որ Ֆուլանոյի
հանգիստը կտարեալ եղաւ և իրենց
ունեցածէն ամէն բան անօր տալու
պատրաստ էին:

Այսպէս ատեն մը վերջ Ֆուլանո իր
պայուսակը բացաւ և գիրք մը դուրս
հանեց:

—Մտիկ ըրէք բարեկամներ, ձեզի
քիչ մը պիտի կարդամ, ըսաւ:

Սկսաւ կարդալ մեր Տէրոջ առակնե-
րէն մի քանին՝ Անառակ որդին և ու-
րիշներ:

—Ի՛նչ գեղեցիկ, ի՛նչ գեղեցիկ են,
մարդիկ և կիներ կը գոչէին, քիչ մըն
ալ կարդացէ՛ք:

Յետոյ նա կարդաց մեր Տէրոջ չար-
չարանքը և մահը: Այս ածուխ պատ-
րաստողները, որ ամբողջ օրը չարաչար
աշխատած էին թէև, իրենց քնանալու
ժամը վաղուց անցած էր տակա-
ւին աշխուժօրէն մտիկ կ'ընէին: Շատ
աւել ատեն էր երբ ամէնքը իրենց անկո-
ղինները գացին:

Թաշորդ առաւօտ այս բարի մարդիկ
չոր թուղ և արմաւ հրամցուցին իրենց
այցելուին և դէպի Ալճեր ճամբայ հա-
նեցին: Բաժնուելէ առաջ անոնց Ս.
Գիրք մը տուաւ և ըսաւ:

—Հիմակ ու հիմա մնաք բարի, ա-
միս մը չանցած ես նորէն կուգամ:

Այդ երեկոյ, օրուան աշխատանքէն
յետոյ երբ ամէնքը կրակին շուրջ հա-
ուաքուած էին խօսակցութիւնը մի մի
այն Ֆուլանոյի և անոր պատմած հիա-
նալի բաներուն վրայով էր: Իրենց ան-
կողինները երթալէն առաջ մարդոցմէ
մին ծունկի պալով աղօթեց. «Ո՛վ Աստ-

ուած այս մարդը ինչ որ քու մատիդ կ'ըսէ եթէ ճշմարիտ է և եթէ Ս. Գիրքը իրապէս մեզի համար քու պատգամներդ են, թող այդ մարդը իրեն խոստման համաձայն ամիսէ մը մեզի գայ, եթէ ճշմարիտ չեն երբեք չի տեսնենք զայն նորէն:

Ճշգրտահօրէն Ֆուլանո որոշուած օրը վերադարձաւ: Ածխագործները գրկակարաց զինքը ընդունեցին և ասկէ յետոյ ալ յաճախօրէն այցելեց զանոնք:

Եթէ Ալեքերիա երթաս այս մարդոցմէ մի քանին տակաւին պիտի գտնես որ լերան կողին վրայի անտառին մէջ կը-

ապրին: Ունին գեղեցիկ և մաքուր գիւղ մը օրը շրջապատուած է ժպտադէմայգիներով: Անոնք քեզի պիտի ցուցնեն կոկիկ մատուռ մը, նաև պիտի հանդիպիս Ֆուլանոյի օր անոնց քարոզիչ պաշտօնեան է: Անոնց ամէնը տնոր միջոցաւ քրիստոնեայ եղան: Երբ բարգաւաճեցան այդ հողամասը գնելով գիւղը շինեցին և խնդրեցին Ֆուլանոյէ որ իրենց հովիւը և իրենց զաւակներուն և թոռներուն դաստիարակը ըլլայ:

Թրգ. Յ. Մ. ԱՊԱՃԵԱՆ

Պէյրուք

ՔՐԻՍՏԻԱՆՈՒԹԻՒՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹԻՒՆ

Քրիստական գիտութիւնը՝ մեզ չըրջապատող նիւթերու բաղդաթիւնը և անոնց մէջ տեղի ունեցած փոփոխութիւնները կ'օւսուցանէ:

Արդ՝ քրիստոնէութիւնը կը բովանդակէ ամէն ինչ օր գոյութիւն ունի օրպէս նիւթ, ինչպէս բոլոր մեծաղնները, բոյսերը և կենդանային կեանքը, կը թափանցէ ան մեզ շրջապատող մթնոլորտին, անկէ անցնելով կը տարածէ իր ուսումնասիրութիւնը, աստղերուն, երկնային մարմիններուն և տիեզերքին:

Մեր ծնած օրէն մինչեւ մեր թաղուելը, կեանքերնիս կը պարտինք քրիստոնէութեան ներքին գործողութեանց որ տեղի կ'ունենան մեր մարմիններուն ներքի դին:

Կեանքը՝ ի բաց առեալ իրեն խորհրդաւոր անծանօթ փուլերուն, կարգ մը քրիստական ներգործութեանց շարունակական յաջորդութիւններէ կը բաղկանայ: Ասանցմէ տմանք ուսումնասիրուած են, ուրիշներ չփոթութեան կը

մատնեն մեր ուղեղները և անհասկնալի հանելուկներ կը մնան: Մեզմէ լուսագոյն ուղեղ ունեցողներն իսկ, խիստ անճարակ և անկարող կը մնան, թափանցելու և հասկնալու համար շատ մը գաղտնիքներ: Յաճախ կը մնանք գուշակող և երազողներ միայն:

Իսկ նկատի առնելով պարզագոյն հարցերը, քրիստոնէութիւնը չի խառափիր հեռագոտելէ աննշան աւազի հատիկ մը կամ աղտի հիւլէ մը, նոյնքան նախանձախնդրութեամբ կը ջանայ վերլուծել ամենանուրբ քրիստոնէական գեղանիւթ և կամ ծաղիկի մը տնաջահոտութիւնը:

Առողջաբանութիւնը և բուժելու արուեստը գրեթէ յեղափոխուեցան, իրենց քրիստոնէական երեսոյթները լաւագոյն կերպով հասկցուելէ վերջ: Իրարու յաջորդող նոր գիւտերը այսգործերուն վրայ մեզի նոր յոյսեր կը ներշնչեն և պիտի առաջնորդեն մարդո ապշեցուցիչ ակնկալութեանց:

Քրիստոնէութիւնը՝ գեո նոր սկսաւ

ճանչցելու որպէս սնեղծական գիտութիւն: Ժիւղդ է որ ներկայիս մեր օւնեցած քիմիական նիւթերէն չատերը գոյութիւն չունէին մինչև որ քիմիագէտներ շինեցին զանոնք:

Վայրկեան մը մտածենք, ինչպէս կոչելու կը ջանանք, որոշ մասնիկային կազմութեան զքիմիական անհատնեւորուն վրայ, չէ թէ նիւթերու խառնուրդի վրայ որպէս հետեւանք օխալ ըմբռնումի: Զօր օրինակ բնութեան մէջ, բոլորովին նոր ներկեր, թէ որակով և թէ քանակով՝ սնեղծագործուած են: Վերջին յայտարարութիւններ ցոյց կուտան մեզի թէ արուեստական ձգախէժը (լաստիկ) աւելի տոկուն և աժան է քան բնական բուսահիւթէն արտադրուածը: Այլ պէտք չէ նկատել այս որպէս կասկածելի կարելիութիւն:

Նոյն ժամանակ բնական ռետին (սազըզ), որ յաճախ խէժ կը կոչուի, այրեցնալ գօտի ծառերէն կը ծորի, և սառած վիճակ մը ունի, և առ հասարակ զանազան ճարտարաբանութեան մէջ կը գործածուի, ինչպէս ներկերու, ջնարակի (վէրնիշ), հասաղթեանց (plastics) մէջ: Բայց շնորհիւ քիմիաբանութեան ասօր տեղը գրաւած են տնտակ տեսակ արուեստական ռետիններ, որոնք խիստ գերազանց յառկութիւններով օժտուած են քան բնութեան արտադրութիւնները:

Նոյն կերպով հիւսելու և մանելու ճարտարաբանութեանը խիստ հսկայ քայլեր առնելու վրայ են: Նամանակահատիկ երբ քիմիաբանութիւնը յաջողեցաւ վերածելու ռետին խորշանիւթ (cellulose), նոյն իսկ օղոցութիւն, արուեստական մէտաքսի, որու տոկունութիւնը կը գերազանցէ բնական մետաքսի կերպար և բամպակի արտադրութիւնը:

Երկրագործական յառաջդիմութիւնը մեծ մասամբ կը պարտինք հողի և բուսական կեանքի քիմիական նոր նոր

հմտութեանց:

Աւելին կայ, քիմիագէտներ օդին բորակածինը կրցան վերածել անաչադրի (ammonia) և բորակաթի (nitrate), ասով բեղմնաւորութեան հրաշալի թանկագին միջոցներ տեսողութեան, որուն խիստ աննշան սահմանափակ մէկ մասը կուտար մեր երկիրը՝ անոնց պակաս ռաւարաւիւր և մտահոգութիւնը միշտ անպակաս ըլլալով մեր օրտերուն մէջ:

Նոյնքան և աւելի արդիական ճարտարագիտութիւնը պէտք ունի բորակաթի, հանրային հսկայ փապուղի բանալու և հանրային հսկայ շինութեանց համար, որոնք անկարելի պիտի ըլլային առանց նոր բաղադրական (synthetic) պայթուցիկներու: Ազդեցութեան և զիւրին գործածութեան մէջ անբաղաժանութիւն գերազանց քան մեզի հին ծանօթ սեւ փոշի վառօթը, որ կը շինուէր նատրի, բորակաթի, ծծումբի և ածուխի բաղադրութեամբ:

Լուսանկարչութիւնը, շարժապատկերը և անոր շուրջ վերջին հսկայաքայլ զարգացումները միմիայն կարելի պարճան կատարուած քիմիաբանական հաստատ բայց որոշ հետազոտութիւններէն:

Ելեկտրականութիւնը և անոր քաջեցուցիչ կիրարկումները, ինչպէս բաթի և հեռատեսութիւնը, չպիտի կրնային այս վիճակին հասնիլ առանց քիմիաբանական յառաջացումներուն:

Մետաղներէն ոմանք, այնքան կենսական մեր ներկայ քաղաքակրթութեան համար, հանքերէն կ'արտադրուին և կը զտուին քիմիաբանական խիստ բայց նոր միջոցներով:

Եթէ մեր գննութեան հորիզոնը ընդլայնելով անջրպետներէն անդին աշխարհներուն հասցնենք և ապա՝ քաղաքական և տնտեսական նման տիտան մտքի աէր աստղաբաշխներու հսկայ գործերուն առջև, միթէ ասոնք կարե-

ՈՍԿԵՓՇՐԱՆՔ

Աւելի լաւ է ունենալ՝ փայտէ եկեղեցիներով ընտիր քարոզիչներ, քան՝ ընտիր եկեղեցիներով փայտէ քարոզիչներ:

Եթէ ունեցածովդ չես գոհանար, աշխարհն ալ ունենաս նորէն թշուառ կ'ըլլաս:

Առանձին ապրելու համար, մարդ կա՛մ անասուն և կա՛մ ալ Աստուած ըլլալու է:

Արիստոսել Գիրքեր կան, ճաշակելիք, գիրքեր կան կլելիք, իսկ գիրքեր ալ կան ծամելիք և մարտելիք:

Աւելի լաւ է ըլլալ մեղաւոր մը անկեղծ, քան քրիստոնեայ մը կեղծաւոր: Կամքը կ'իշխէ 20 տարեկանին, հանճարը՝ 30ին, իսկ գատողութիւնը՝ 40ին:

Պաշտպանէ զիս իմ բարեկամներէս, ես թշնամիներէս կրնամ պաշտպանել ինքզինքս:

Պատրաստէ իւր և մանոցը աւ Աստուած պիտի հայթայթէ քթանը:

Աւելի լաւ է հեծնել էջի վրայ որ կը տանի, քան ձիու մը վրայ օր կը նետէ:

Աստուած ամէն թռչունին կեր կուտայ, բայց բոյնին մէջ չի գներ զայն:

Պատուէ սրիկան՝ քեզի պիտի զար-

լի պիտի ըլլայի՞ն, առանց կատարելագործուած և զօրաւոր նորահնար գործիքներուն: Հեռագիտակներու վերջի խաչոր 100-200 մատնեղափ ապակիները, ցոլացող հայելիները և հետազոտութեան համար հազար ու մէկ նուրբ գործիքները, առանց քիմիաբանական պիտութեան բացարձակապէս անկարելի պիտի ըլլային:

Ո՛րքան անսահման է քիմիաբանութեան հորիզոնը և կիրարկումը:

(ՏՈՒԹ.) Ա. ԱՊՈՒՀԱՅԱԹԵԱՆ

նէ. զարկ օրիկային, քեզ պիտի պատուէ:

Ծնունդով մահուան, իսկ մահով անմահութեան կ'առաջնորդուինք:

Ուրախութեան համար անհրաժեշտ են. — «Բան մը ընել, բան մը սիրել և բանի մը յուսալ»:

Ուեղկ Լաւ է ուշ՝ քան երբեք: Դիոնիսիոս Կ'ուզեմ հիւանդանալ քան ծուլանալ:

Իմ աղաս Հաննիպալ մեծ զօրավար մը պիտի ըլլայ, քանզի զիտէ ինչպէս հնազանդիլ:

Աշխատինք ապրելու այնպէս բարի, որ երբ մեռնինք վարձկան մեռելաթաղըն անգամ տիրի:

Շնահանը (cynic) այն անձն է, որ զիտէ ամէն բանին զինը, բայց ոչ մէկ բանի արժէքը:

Համբերութիւնը կծու է, սակայն պտուղը անուշ:

Ամէն մարդ հատար մըն է եթէ զիտանաս ինչպէս կարգալ:

Դպրոց ունեցող ազգը՝ ապագայ տնի:

Ոչ թէ մահը, այլ անոր պատճառը մարդը կը մարտիրոսացնէ:

Ազնուացուր ինքզինքդ, և անով զիտցիր թէ սրիկայ մը պակսեր է աշխարհիս վրայէն:

Աստուած մարդը մարդուն բաժնեց, որպէսզի իրարու օգնեն:

Ես մահուան հետ ժամադրութիւն ունիմ:

Աշխարհային բաներ Արիստոզոմին Զորիին կը նմանին, երբ աւելի պէտք ունենանք մեզ կը լքեն ու կը փախչին:

Այն որ չի սիրեր չապրիք, և այն որ կեանքով (Յիսուս) կ'ապրի, չի կրնար մեռնիլ:

Մարմնով ծոյլը՝ գործը, միտքով ծոյլը՝ խորհիլը, ի՞նչ հոգիով ծոյլն ալ աղօթքը կ'առէ:

Պէյրուք ԵՆՈՎՔ ԿԷՕՔԿԷՕԶԵԱՆ

ԳԻՏԱԿԱՆ ՔՐՈՆԻԿ

ՄԻՇԻԿԸՆ համալսարանի գիտունները կրէնիոնի սառնարաններուն բաւական կեանքը ուսումնասիրելով կը յուսան որոշել թէ տառը ե՞տ կ'երթայ թէ՛ կը յառաջանայ: Այսպէսով անոնք կ'ուզեն հասկնալ թէ աշխարհ տառոյցի դարաշրջանէ մը դուրս կա՞յ թէ նոր սառն դարագլուխի մը մէջ պիտի մանէ:

ՄԱՐԴՈՒՍ ամէնէն արագ ճամբորդութիւնը մինչև հիմա եղած է ժամը 406.9 մղոն մրցումի սաւառնակի մը մէջ: Սակայն ներկայ սաւառնակներու արագութեան մեծագոյն տակմանը ժամը 600 մղոն պիտի ըլլայ կ'ըսեն գիտունները:

ԲՐՈՖ. ԲԱՆ յայտնութիւն մ'ըբաւերա իր շատ մը փորձերուն արդիւնքը ըլլալով ըսաւ թէ չար ճառագայթներ՝ որոնք մարդկային աբիւնէն, մատերու և քիթի ծայրերէն և աչքերէն կ'որձակուին, կրնան սպաննել մակարդը (yeast) և թերեւ ալ ուրիշ գործարանաւոր մարմինները: Ատոնցմով նաև կարելի պիտի ըլլայ մանրէներէն յառաջ եկած հիւանդութիւնները տերտել:

Ըստ հին աւելորդապաշտութեանց մարդկային մարմինը կրնայ չար ազդեցութիւն մը ձգել իր միջավայրին վրայ: Այժմ այս գաղափարին գիտական պատճառը գտնել կը ջանայ Բրոֆ. Բան:

Մակարդը որ հաց թխելու համար կը գործածուի հինգ վայրկեանի մէջ սպաննուած է, լոկ մարդու: Մը մատներուն ծայրերէն արձակուած ճառագայթումով: Երբ մատնաչափի մը մէկ 12րդ հաստութեամբ դաւարգի (quartz) կտոր մը մակարդին և մատներուն ծայրերուն մէջտեղ դրուած է 15 վայրկեան պէտք եղած է որ մակարդը բոլորովին մեռնի:

Անցեալ ամառուան մէջ Բրոֆ. Բան իր կատարած փորձերէն գտաւ թէ քի-

թին ծայրը և աչքը կ'արտադրեն նոյն սպաննիչ ճառագայթումը, կուրծքը ճառագայթում չունի, սակայն արիւնը և լորձունքը ունին: Մարմինէն արձակուած ճառագայթներուն քանակը տարբեր անձերու մէջ կը տարբերի: Շատ մը մարդիկ կրնան մեծ քանակով ճառագայթներ արտադրել և տարբեր պարագաներու տակ միևնոյն անձը կրնայ տարբեր քանակով ճառագայթներ արտադրել:

Ապացուցուած է նաև թէ բոլոր մարդկային մարմինը ճառագայթներ կ'արտադրէ:

Տակաւին այս ճառագայթումին ճշգրիտ բնոյթը հասկցուած չէ, բայց անդրմանիչակագոյն ճառագայթներուն մէկ տեսակը ըլլալ կը կարծուին:

Չորս տարի առաջ Գերմանական և Ռուսական խուզարկողներ գտած են թէ մարդկային մարմնի գործօն մասնները կ'արձակեն տկար անդրմանիչակային ճառագայթ ու փոքր գործարանաւոր մարմիններու աճումը կը զբգռէ: Նաև գտած են թէ անգործ մասնները և մարմնին շատ մը հիւսկէնները (tissue) ճառագայթներ չեն արձակեր, սակայն առողջ և բնական անձերու արիւնը կ'արձակէ:

Բրոֆ. Բան կը շեշտէ այս մարդկային ճառագայթներու ասկէ աւելի խուզարկումին պէտքը:

ԳՈԼՈՄՊԻԱ Համալսարանէն Բրոֆ. Լա Մէր կ'ապացուցանէ թէ լուսածինի և կրածինի (calcium և phosphorus) աղերը ոչ միայն առողջ և զօրաւոր անձեր կը շինեն այլ նաև ծերութիւնը կ'ուշացնեն:

Եթէ յարմար չափով կրածնի լուսածնատ կոչուած (calcium phosphate) քիմիական խառնուրդը օւտուի կեանքը 10 առ հարիւր կ'երկնայ, այնպէս որ եթէ մարդ մը 70 տարի պիտի ապրէր իր

կեանքը եօթը տարի ևս պիտի երկարի։
Փոքր մանուկներ, մայրեր և երա-
խաներ մեծապէս պիտի օգտուին այս
քիմիական խառնուրդէն։

Կրածինի և լուսածինի աղերը կըր-
նանք մեր մարմնին համար հայթայթել
առատօրէն կաթ և տերեւօտ բանջարե-
ղէն ուտելով։

Ակուաներու փտութեանը պատճառը
մեր անուշդին մէջ այս նիւթերու պա-
կաս գտնուելն է։

Ժամանակ պիտի գայ որ մեր կերա-
կուրի համար գործածած աղին հետ այս
աղերն ալ պիտի խառնենք ինչպէս մի-
ջանի տեղեր ալ (iodine) և կը խառնը-
ւի աղին հետ (goiter) խպիպ կոչուած
հիւանդութենէն զերծ մնալու համար։

Մանուկներու կերակուրները կրկին
անգամ աւելի կրածին պարունակելու
է քան չափահասներունը, իսկ մայրե-
րը միւս չափահասներուն եռապատիկը
պէտք է գործածեն։

ԳԻՏՈՒՆՆԵՐԸ տակաւին որոշապէս
չեն կրնար ըսել թէ մարդու ծագման
կեղրոնը որ երկիրն է։ Ներկայ գիտա-
կան տեսութիւնը այն է թէ մարդս ծը-
նունդ առած է կեղրոնական Ասիայ մէջ,
Բայց ծավայի մէջ գտնուած գանկէ մը
կը թելադրուին խորհելու թէ մարդկու-
թեան ծննդավայրը այրեցեալ գօտին
կրնայ ըլլալ։ Գիտունները օրօշ կեր-
պով կը յայտնեն թէ այս գանկը կը
ցուցնէ որ ծավա կղզին սառի շրջա-
նէն ի վեր միշտ բնակուած է։

ՎԵՐՋՆԱԿԱՆԱՊԷՍ տակաւին չէ փա-
տուած թէ ինչպէս ծնունդ առած են
գիտաւոր աստղերը։ Շատ մը աստղագէտ-
ներ կը կարծեն թէ տիեզերքի հեռաւոր
անջրպետներէն այս գիտաւորները մեր
արեգակնային դրութիւնը մօտաք գտած
են։ Վսէսվիացքի, Մոսկուայի Ռուս
աստղագէտը, այս վարկածը կը հերքէ
և անոր տեղ կ'առաջադրէ թէ՝ գիտա-
ւորները Լուսնեթագ ժողովրդի մակերե-

սէն ժայթքումներ են։ Այս կարծիքը
առաջագործողը կը հաւատայ թէ միւս
մեծ ժողովրդներուն վրայ ներկայիս
չարունակ բնական գործողութիւններ
տեղի կ'ունենան և կը թելադրէ որ
միշտ գանոնք դիտենք՝ ահագին և
հսկայ զանգուածներու ժայթքումով
ծնունդ առնելիք գիտաւորներու հան-
դիսատէս ըլլալու համար։

ՄԻԱՅԵԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ մէջ մի-
ջանի բժիշկներ նոր տեսակ մը շիճուկ
չինեցին, որ ժանտատենդի դէմ կրնայ
պաշտպանել մարմինը։ Առաջին փոր-
ձը պիտի կատարուի անոր գիւտարար-
ներուն վրայ։ Ասիկա շինուած է ժան-
տատենդէ վարակուած առնէտի լուե-
րէն։ Այս լուերը աղի լուծողութեան
մը մէջ կը ճզմուին, լուծողութեան վը-
րայ բնածխաիւղական թթու (carbolic
acid) աւելցնելով ամբողջ խառնուրդը
հինգ օր այսպէս կը մնայ։ Այս երբ
ներարկուի՝ ժանտատենդի մանրէները
կը տկարանան, այնպէս որ անոնք ալ
անկարող կ'ըլլան ժանտատենդ պատ-
ճառել։ Վեց խոզերու վրայ կատար-
ուած փորձերը յաջող եղած են։

ՅՈՒՆԻՍ մասուն մէջ երկու փոքր նոր
գիտաւորներ գտնուած են, մէկը Նիւմէն
տնուն Ամերիկացիի կողմէն իսկ միւ-
սը կէտտէս անուն Աւստրալիացիի կող-
մէն։ Այս երկու երկնային մարմիննե-
րը զօրաւոր հեռագիտակներով միայն
կարելի է տեսնել։

ԿԱՊՈՅԿ կէտ ձուկ մը ծնած առեն
23 ոտք երկայնութիւն կունենայ, առ-
կայն երբ եօթը ամիս իր մօրը կաթով
սնանի անոր երկայնութիւնը 58 ոտքի
կը հասնի։

ՔՐՈՅ. ԷՏՄՈՆՏ ՅԱՐԻՍ, Ամերիկացի
գիտուն բժիշկ մը, նոր մեթոտ մը հը-
նարած է անորոշ ժամանակի մը համար,
թերեւս հազարաւոր տարիներ անհղծ
պահելու մեռած մարդոց մարմինները։
Ասոր համար կը գործածուի (paraffin)

մոմանիւթ : Մարմինն գոյնը և ձեւը պահելու համար նախ երակներու մէջ հեղուկ մը կը ներկարկուի, ապա մարմինը ալքոլի լուծողութեանց մէջ կը պահուի որ դիմանայ ապա ջուրը հանելու գործողութեան, 50/0 բնածխաիւղական թթու պարունակող xylol կոչուած իւղաւ հեղուկի մէջ կը դրուի, և ամէնէն վերջը հալած մոմանիւթը մարմինն ներս թափանցիլ կը տրուի : Բոլոր գործողութիւնը 70 օր կը տեւէ :

ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ մէջ 4000 տարուան հին պալատ մը գտնուած է օր անծանօթ ժողովրդի մը անծանօթ մէկ վեհապետին համար կառուցուած է : Այս պալատին շուրջը անծանօթ քաղաքի մը աւերակները երեւան ելան : Պալատին մէջ գտնուած են լուսակիճէ (alabaster) սքանչելի ամաններ, պղինձէ սուր մը արծաթէ կօթով և շատ մը ոսկեղէն և արծաթեղէն զարդարանքներ :

ԲԱՂԵԾ՝ Հ. ՓՈԼԱՏԵԱՆ

ՏԵՂ ՄԸ ՈՒՐ ՏԱԳՆԱՊ ԶԿԱՅ. ԿԱՄ ՍԱՐԲԻ ԿՂԶԻՆ

Քսաներորդ դարու այս փոփոխութեանց և անհանգստութեանց մէջ դժուար և միանգամայն հետաքրքրական բան է գտնել վայր մը որ զերծ ըլլայ այս բոլորէն : Սակայն Մանչի ծովուն մէջ կայ փոքր կղզի մը ուր հակառակ ներկայ տնտեսական և քաղաքական տագնապին լոկանդորրութիւն և համերաշխութիւն կը տիրէ : Այս կղզին Սարք կը կոչուի, օր միակ աւառական պետութիւնն է աշխարհի մէջ :

Այս կղզին երեք ու կէս մղոն երկայնք և մէկ ու կէս մղոն լայնք ունի : Անոր բոլոր մասերէն հսկայ ռազմահայեաց ժայռեր կը բարձրանան որոնք զանազան բոյսերով և գոյնզգոյն ծաղիկ-

ներով զարդարուած են : Վարը՝ ծովափին աւազուտ խորշերը և խորունկ անձաւները՝ ծածկուած այլադան դեղնօրակ ծովային բոյսերով սքանչելի պատկեր մը կը պարզեն ճամբորդին : Կըղզիին խորքերը՝ գետակներու շուրջ գարնան՝ բնութիւնը կանաչով կը զարդարուի : Բնութեան այս անդորր ծոցը չաւնի ամենեւին թունաւոր կենդանիներ և սողուններ :

Նեղ և քարուտ արահետ մը փոքրիկ նաւահանգիստէն օժապոտյոյ կ'երկարի մինչև կղզիին կեդրոնը օւր մի քանի խանութ և շոք օթեւաններ կան :

Մօտ 1400 տարուան պատմութիւն մը ունի այս կղզին, երբ առաջին անգամ կաթոլիկ վանականներ այնտեղ այցելեցին : Սակայն միջին դարերու ընթացքին յեղուկաներու եւ ծովահէններու բոյնը դարձաւ : Բայց էլիզապէթ թագուհին Սըր Հէլիքը տը Գարթլէթ անունով մարդու մը շնորհեց զայն 1565ին՝ պայմանաւ որ հոն գաղթականներ բնակեցնէ :

Այս կղզին ռառաստաններու կղզիք է կը կոչուի, որովհետեւ Նոյն այս մարդն է որ քառասուն ընտանիք հոն բերել տուաւ իւրաքանչիւրին հողամաս մը յատկացնելով : Նաեւ կղզիին պաշտպանութեան համար իւրաքանչիւրին հրացան մը տուաւ : Նոյն իսկ տակաւին սովորութիւն է թէ երբ որեւէ հողամաս մը ծախուի՝ պայմանը այն է որ հրացանակիր մը օրպէս պահպան պահելու է ագարակը :

Կղզին մինչև 19րդ դարու կիսուն մի քանի կալուածատէրներու ձեռքը անցաւ : Սակայն 1852 ին Տիկ. Հաթհաուէյ զայն վերջնականապէս ժառանգեց : Ներկայ աւատապետին տիկինը այս տիկնոջ թոռան թոռն է :

Տէր և Տիկ. Հաթհաուէյ լիցզօր տէրըն են կղզիին : Իրենք փարլամենթի նախագահն են օր տարին երեք անգամ

նիստ կ'ունենայ: Բայց եւրիշ ատեն ալ կրնայ նիստ ունենալ երբ Տիկ. Հաթհառէյի կողմէն կանչուի: Իւրաքանչիւր ագարակ իւր ներկայացուցիչը կը զրկէ, թիւով 40, նաեւ 12 պատուիրակներ բնակիչներու մնացած մասէն կ'ուղարկուի: Բնակչութեան ընդհանուր թիւն է 675:

Ուէ վէճ, կամ կռիւ գոյութիւն չունի այս կղզիին մէջ: Եթէ այսպիսի բան մը պատահի կղզիին սէնեէօրին կամ իւր տիկնոջ առջեւ կը բերուի խնդիրը որ վերջնական և վճռական կերպով կը լուծուի: Խաղաղութիւն, սէր, եւ եղբայրութիւն կը տիրապետէ այս մէկուսացեալ պետութեան մէջ:

Հոս օրէնքները ժողովուրդը ինքը կը դնէ, կառավարութեան տուրք չեն վճարե՛ր՝ միայն աւատապետը ստացուածքներէն, խմիչքներէն և ծխախոտէն, փաթիլ տուրք մը կը հաւաքէ: Ամէն ընտանիք ինքնաբաւ և բարեկեցիկ կ'ապրի: Հոս անգործութիւն, տնտեսական թափալ, քաղաքական իրաւանցում գոյութիւն չունին:

Երկու նախակրթարան կայ ուր ֆըրանսիէն և անգլիերէն կ'ուսուցուին: Ժողովուրդը իր ուրոյն գաւառաբարբարը ունի սակայն կրնայ թէ՛ անգլիերէն և թէ՛ ֆրանսերէն լեզուով խօսիլ:

Սարքի մէջ ներկայ փոխադրութեան միջոցները գոյութիւն չունին: Անոր տէրը չ'աւգեր որ կղզիին հանգիստը վրդովի: Ոչ ոք հրաման ունի աղաւնի մեծցունել ի բաց առեալ Սարքի տէրոջմէն:

Թէև սեպհական բանտ ունին սակայն երբեք չի գործածուիր: Աւատապետի կողմէ արդարութեան պաշտօնեայ մը ընտրուած է ժողովուրդին մէջ ծագած վէճը կամ կռիւը անմիջապէս լուծելու: Փարլամէնթը ամէն տարի ոստիկանապետը կ'ընտրէ երկրի խաղաղութեան համար, նաեւ իրեն համար

զրագիր մը, ատենակալ մը և գանձապետ մը:

Բոլոր արմտիքներէն, խմիչքներէն, կենդանիներէն, և ամէն բանէ որ կ'արտադրուի երկրին մէջ աւատապետը իրաւունք ունի մէկ տասնորդը առնելու:

Ուէ հողամաս կտակով չի թողուիր: Եթէ ննջեցեալը մօտիկ ազգական չունի Seigneurին կը մնայ իր ստացուածքը: Եթէ ուէ կալուածատէր իր ստացուածքը ծախելու ըլլայ նախ հրաման առնելու է աւատապետէն որ ծախուած գինին 1/13 առնելու իրաւունք ունի:

Ահաւտօրիկ այս միջնադարեան օրէնքներն են որ Սարքի կղզին անգործութեան և համերաշխութեան մէջ կը պահեն:

Թէ ամառ թէ ձմեռ գիշերները հանգիստօրէն կ'անցնին: Արեւը մարելէն ետք ամէն կողմ լռութիւն կը տիրէ, ամէն ոք իւր տունը կը քաշուի: Ուէ անձ մը գիշեր ատեն փողօցի մէջ տեսնել կարելի չէ:

Բնակչութեան մեծ մասը երկրագործ է օրոնք կամովին իրենց seigneur ին արտերը կը հերկեն և իր անասունները կը խնամեն: Մնացեալ մասը ձկնորսներ են, բոլորն ալ գոհ իրենց վիճակէն:

Այս բնակիչները հետաքրքրական սովորութիւններ և հաւատալիքներ ունին: Երբ տեւ անհատի մը արկած մը պատահի, ան ծուռ կի գալով Հայր Մեըրը կ'աղօթէ և ապա բարձրաձայն կ'աղաղակէ. «հարօ, հարօ, հարօ փութացէք օգնութեան»: Երբ բնակիչները այս լսեն իսկոյն տեղւոյն վրայ օժանդակութեան կը փութան: Փարլամէնթը պարագայ կը քննէ և եղած խնամքը կը տածէ:

Ողիներու կը հաւատան, և անոնց վերաբերեալ շատ հետաքրքրական հէքեաթներ ունին: Իւրաքանչիւր տան մէջ բուխերիկին վրայ քարէ հաստ դարակներ կան որոնք թւում կաննեբու հանգստեան համար կը ծառայեն:

Անոնք կը հաւատան թէ երբ մէկը հոգեւորքի մէջ ըլլայ ոգիները բարձր կրօնկով կ'օշիկեն եր հագած տան սանդուխներէն վար կ'իջնեն :

Կ'ըսուի նաեւ թէ առանց գլուխի յաւերժահարս մը ձիու վրայ հեծած միշտ գիշեր ատեն կը պտըտի և երբ մէկը խթման գիշերին ջրհորէն ջուր քաշէ, պիտի լսէ անոր ձայնը որ զինք կը կանչէ և այն անձը տարին չլմնցած կը վախճանի :

Ս. Յովհաննէսի տօնին նախորդ գիշերը կը պատմուի թէ բոլոր անառններու հօտերը ծունկի կուգան և այդ պահուն անոնք մարդկային լեզուով խօսելու կարողութիւնը կ'աւելնան : Տարիներ առաջ սքանչելի հանդիպութիւն մը տեղի կուենեար այդ օրը : Զարդարուած կառքեր և սայլեր կ'զգիին մէջ կը պտըտցնէին :

Տակաւին մինչեւ այսօր այս կղզւոյն Seigneur ը և իր տիկինը ամէն ջանք կը թափեն հին աւանդութիւնները, սովորութիւնները, բարքերը, օրէնքը, պահելու համար : Ասոր շնորհիւ է որ Սարքի կղզին այս քսաներորդ դարուն մէջ երբ բոլոր աշխարհ տազնապի մէջ է ինք խաղաղութեան և անդորրութեան դրօշափի մէջ կ'ապրի :

ՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՕԹԵՐ

ՄԻԱՑԵԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ խնայողութեան համար պետական դպրոցներու պիւտճէէն զեղջեր կտտարուած են, ուսուցիչներու թոշակները և անոնց թիւը պակսեցնելով :

Մ. ՆԱՀԱՆԳԱՑ տնտեսական կեանքին մէջ բարելաւումի նշաններ տեսնուած են վերջին մի քանի ամիսներու միջոցին : Նլիկարակաւ կարգ մը գոր-

ծիքներու սպառումը զգալի կերպով աւելցած է : Նիւ ինկլէնտի շատ մը հիւսուածեղէնի գործարանները աւելի մեծ չափով արտադրութեանց սկսած են, կոշիկի գործարանները ամառնային և աշնանային մեծ թիւով ապսպրանքներ ընդունած են, փոքր քաղաքներու, մասնաւորապէս հարաւարեւելքի մէջ առեւտուրը շահ ապահովելու վրայ է : Օթոյի հրապարակը բաւական բարւոքում կրած է : Քրայսլըր և Շէվրոլէ իրենց սպառումը մեծապէս աւելցուցած են :

Այսու հանդերձ Միացեալ Նահանգաց անգործներու թիւը 11 միլիոնի մօտ է :

ԳԱՆԱՏԱՅԻ հրապարակը ևս շինութեանց, երկրագործական մեքենաներու սպառումի, արմտիքի արտածումի մէջ զգալի բարելաւում մը ցոյց տուած է :

ՄԵԾՆ ԲՐԻՏԱՆԻՈՅ մէջ անգործներու թիւը յաւելում կրած է, պաշտօնապէս արձանագրուածներուն թիւն է 2,811,782, չ'արձանագրուածներով թիւը կ'անցնի 3,250,000 : Բարձր մաքսատուրքը Բրիտանիան չէ փրկած :

ԳԵՐՄԱՆ կառավարութիւնը 400 միլիոն տուարի բաց մ'ունի, գործաւորներու միութեան անդամներուն հարիւրին 40ը անգործ են : Երկաթուղիներու հասոյթը, այս տարուան առաջին չորս ամիսներուն մէջ, 1931ի նոյն շրջանին մէջ եղածէն 27 առ հարիւր պակաս եղած է : Արտածումի քանակը նուազագոյն կէտին հասած է :

ԲՈՂՈՐ կեդրոնական եւրոպայի և Պալքաններու մէջ տազնապը անսկսած է :

ՍՈՒՐԻՈՅ մէջ տնտեսական տազնապը մեղմանալու նշաններ ցոյց չի տար, ընդհակառակը կը սատակոնայ :

ՀԱԼԷՊԻ ԽՄԵԼԻՔ ԶՈՒՐԸ

Հալէպի Ելեկտրական Ընկերութեան տնօրէնի արտայայտութիւններէն . —

Այս մեծ քաղքի բնակչութեան համար երբ ջուր մատակարարելու ձեռնարկեցինք լաւ աղբիւր մը գտնելու համար թուրքիոյ սահմաններէն սկսեալ շատ տեղեր գետինը շատ խոր փորեցինք: Եւ վերջապէս շատ առատ ջուրով աղբիւր մը գտանք, որ իր ջուրը հաւանաբար Արարատ լեռան ձիւներէն կ'առնէ: Քանզի այս տարի երբ կուտակալութեան բոլոր ջուրերը ցամաքած են այս ջուրի մակերեսը նկատելի չափով մը իջած չէ:

Քաղքին մէջ շինուած Այնթէլի ջուրի աղբիւրները առաջ 800-1000 խորանարդ մէդր ջուր կուտային, իսկ հիմա 2500-3000 խոր: մէդր ջուր կը հայթայթենք:

Այս 3000 խոր: մէդր ջուրին 1000 ը աղբիւրներու միջոցաւ ժողովուրդին ձրի կը տրուի, 500ը քաղաքապետութեան կողմէ հանրային նպատակներու համար կը գործածուի, և մնացեալը տուններու կը բաշխուի իր արժանի գինէն քիչ մը բարձր գրամի փոխարէն:

ՄՈՒՍՈՒԼԻ ՔԱՐԻԻՂԻՆ ՓԱՊՈՒՂԻՆ ԵՒ ԵՐԿԱԹՈՒՂԻԻ ԳԻԾԵՐԸ

«Պաղատաւ Թայմզ»-է քաղելով Առեւտրական Սենեակը յայտարարած է. —

Հայֆա-Պաղատաւ երկաթուղիի գիծը Եփրատի երկայնքին քարիւղի փապուղիին զուգահեռաբար պիտի երկարի և ապա մինչեւ Պաղատաւ հարաւարեւելեան ուղղութեան պիտի հետեւի:

Այս երկաթէ գիծին շինութիւնը մեծ կարեւորութիւն մ'ունի, քանզի ան Մերձաւոր Արեւելքի արտադրութեան մասնաւորապէս երկրագործական արտադրութեան պէպի Եւրոպա փոխադ-

րութիւնը պիտի դիւրացնէ զայն Սուէյ-զի Ջրանցքի ընկերութեան տուրքերէն ազատելով: Միեւնոյն ատեն զբօսաշրջիկներու և ճամբորդներու երթեւեկը Արեւելքի և Արեւմուտքի միջև պիտի դիւրացնէ:

Յորդանան գետի վրայ կամուրջ մը պիտի շինուի:

Քարիւղի խողովակները գետեղելու համար պէտք եղած աշխատանքները փութով յառաջ տարուած են Քէրքիւքէն մինչև Տիգրիսի վրայ Պիգի, և անկէ ալ մինչև Եփրատի վրայ Հատիթա: Խողովակները արդէն Պատրա հասած են և մասնաւոր կառախումբերով պիտի փոխադրուին:

Խողովակները պիտի երկարին Հատիթայէն սկսեալ մինչև Հայֆա՝ անցնելով անապատի արեւմտեան կողմը գանուող Բաթալայէն և Մեռեալ Մովու հարաւային կողմէն: Անգլիացիք քարիւղի զտման գործը պիտի կատարեն Հայֆայի այդ նպատակով կառուցուելիք գործարաններու մէջ: Մէկ միլիոն 250 հազար անգլիական ոսկի ծախք կ'ենթադրուի Հայֆայի նաւահանգիստին համար, որ 300 ֆեթսան տարածութիւն պիտի ունենայ, և չուրջը 2 կոհակարգիւ գիծեր պիտի շինուին առաջինը մէկ իսկ միւսը մէկուկէս մղոն երկաթութեամբ: Պաղեստինի Երկաթուղիի Ընկ. ի վարչութիւնը արդէն ձեռնարկած է երկաթուղիները ընդլայնելու աշխատանքին:

Քարիւղի փապուղիի Ֆրանսական գիծը Եփրատէն զատուելով պիտի յանգի Միջերկրական՝ Ճրիպոլսոյ մէկ երկուս մղոն հիւսիսակողմը: Ֆրանսական ընկերութիւնը քարիւղը խողովակներէ ուղղակի չոգենաւ պիտի փոխադրէ և զտումի գործը Տրիպոլիս պիտի չընէ թէ Տրիպոլսոյ և թէ՛ նաւահանգիստի մէջ պէտք եղած դիւրութիւնները չկարենալով գտնել:

ՀԱՅ ԿԵԱՆՔ

Հ. Բ. Ը. ՄԻՈՒԹԵԱՆ ՁԵԿՈՑՆԵՐԷՆ

ՄԵԼԳՈՆԵԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹԵԱՆ ՄԷՋ.—

Կեդր. վարչութիւնը խոր օրտաբեկութեամբ մըն է որ իմացաւ Միութեան Նիկոսիոյ Մելգոնեան Կրթական Հաստատութեան մէջ պատահած ըմբոստութեան ցաւալի դէպք մը, որ Յունիս 7 ին սկսած և հետեւեալ օրը սաստկացած է, եօթերորդ դասարանի խումբ մը տաք գլուխ աշակերտներու կողմէ, որոնց միացած են նաև վեցերորդ դասարանէն աշակերտներ, ինչպէս և գլխաւորաբար անցեալ և նախորդ տարեալան շրջանաւարտներէն երկուքը և տասը ամիսներէ իվեր մեկնումը յետաձգուած ուրիշ անբարեյոյս սան մը:

Ըմբոստները խել մը բողոքախառն լուսանքներով յանդգնած են բիրտ յարձակում մը գործել Որբանոց-Հաստատութեան Տնօրէն Տ. Գ. Կիրակոսեանի վրայ, ռարկէ անմասն չեն մնացած իր քովը գտնուող գլխաւոր ուսուցիչներ Տիարք Արուսեան և Օշական: Իրենց խլրտումին մէջ, բռնութեամբ իրենց Տնօրէնին հրաժարագիրը խլելու և յետոյ հաստատութենէն վոնտելու աստիճան յառաջ գացած են ըմբոստները, որոնց դաստիարակութեան և բարօրութեան համար իրենց հայրախնամ բարերարը և Հ. Բ. Ը. Միութիւնը տարեկան 11000 ոսկիի ծախք մը կ'ընեն: Ահա թէ ինչպէս կը բացատրուի այն դռն յաւատխարութիւնը զոր այս դէպքը, դժբախտաբար յեղաթիւրումներով արձագանգ գտած, ազգային շրջանակներու մէջ յառաջ բերած է:

Տնօրէն Տ. Կիրակոսեան ի սէր իսղաղութեան տեղի տուած է խաժառմին առջեւ: Եւ իր առաջին մտածումը եղած է զիմեւ Կիպրոսի Հայոց Առաջնորդ

Գեր. Սարաճեան Սրբազանի խորհուրդին, և յետոյ Թաղական Խորհուրդին և Միութեան Տեղական Մասնաժողովին, գործելով առաջնոյն ատենապետ Տ. Գէորգեանի և երկրորդին ատենադպիր Տ. Սուլթանեանի հետ խորհրդակցաբար:

Տրուած ըլլալով դէպքին ծանրակշիռ բնոյթը, և ըմբոստողաքը սանձարձակօրէն Հաստատութեան տէր դարձած ըլլալով, հարկ տեսնուած է աստիկանութեան օգնութեան զիմեւ, խանգարուած կարգապահութիւնը վերահաստատելու համար: Անմիջապէս Հաստատութիւն այցելած է աստիկանութեան հրամանատար Մր. Շէլիշ, որ հորցաքննած է պարագլուխները: Աստեցմէ հինգը 2 զիշեր բանտարկուած մնալէ վերջ, Տ. Կիրակոսեանի զիմումներուն վրայ կ'արձակուին, պայմանաւ որ մինչեւ կղզիէն իրենց վտարումը Ս. Մակարի վանքին մէջ արգելափակուած մնան:

Ջղագրգռուած հոգիներու այդ պայթումը մասամբ կը բացատրուի թունաւորումի աշխատանքով մը՝ զոր քըննութիւնը երեւան պիտի հանէ աւելի յայտնօրէն:

Անմիջապէս ար սոյն անակնկալ դէպքին լուրը Բարիկ հաղորդուեցաւ, հեռագրով պէտք եղած հրահանգը տրուեցաւ Միութեան Ընդհ. Քննիչին, որ արդէն Պէյրութէն մեկնելու կը պատրաստուէր: Ամսուս 14ին, Տ. Մ. Ալէմշահ Նիկոսիոյ ժամանելով, ձեռնարկած է խղճամիտ քննութեան մը որ կը հաստատէ ըմբոստացող սաներու պատարակելի վարմունքը, և, ինչպէս կ'երեւայ իր առաջին տեղեկագրէն, Տնօրէնին հետ համախոհաբար խաղաղութիւնը վերահաստատելով Հաստատութեան մէջ, ըրած է նաև անհրաժեշտ դատուած տիրակալ կորգադրութիւնները: Ինչպէս որ կառավարութիւնը որոշած է կղզիէն հեռացնել անբաղձալի

սաները, նոյնպէս և Ընդհ. Քննիչը հարկ տեսած է վտարման պատիժը գործադրել զոնէ 8-10 պարագլուխներուն մասին, խստօրէն հրաւիրելով իրենց հետեւորդները ևս որ յայտնեն անվերապահ զղջում և հնազանդութիւն, որուն վրայ զղջահար սաները փութացած են ներում հայցել իրենց Տնօրէնէն:

Այս առթիւ օրոշուած է հիմնական բարեփոխումներ մտցնել Հաստատութեան մէջ՝ աւելի լայն տեղ տալով բարոյական դաստիարակութեան, որուն իր փորձառութեան սատարը պիտի բերէ անտարակոյս ծանօթ մանկավարժ Տ. Պ. Գէորգեան, որ աւագ ուսուցիչ նշանակուած է յառաջիկայ տարեշրջանին համար:

Առ այդ Ընդհ. Քննիչը և Հաստատութեան Տնօրէնը համախոհաբար կը կը պատրաստեն ծրագիր մը, ինչպէս նաև 1932-1933 տարուան նախահաշիւը անհրաժեշտ նկատուած խնայողութեանց հիման վրայ:

ՆՈՐ ԽԱՐԲԵՐԴԻ ՄԷՋ ՎԱՐԺԱՐԱՆ

Հանգուցեալ Խարբերդցի Հանր. Մկրտիչ Յովհաննէսեանի Հայաստանի մէջ դպրոցի մը շինութեան համար Բ. Միութեան կտակած 1600 ոսկին Ամերիկայի համախարբերդցիական Միութեան գիմումին վրայ յատկացուած է Նոր Խարբերդի մէջ դպրոցի մը կառուցման:

ՄԱՄԼԹԵՅՆԻ ՀԻՒԱՆԴԱՆՈՅԸ

Մամլթէյնի Հայ Թոքախտանօցին դիւրքը իր նպատակին համար անյարմար նկատուած ըլլալով բոլոր բժիշկներու, Պէյրութի Տեղ. Մասնաճիւղի և ընդհանուր քննիչ Տ. Ալեմշահի տեղեկատուութեան համեմատ, թելօդութիւն եղած է զայն Լիբանանի բարձունքը փոխադրել: Հ. Բ. Ը. Միութիւնը կը փափաքի այս ծրագիրը ի գլուխ հանել, եթէ անոր համար պէտք եղած 2000 ոսկին հայթայթուի: Միութեանը

Ամերիկաբնակ մէկ պատուական բարեկամը յանձն առած է այդ գործին համար 1000 ամլար արամադրել: Կ'ակնկալուի որ օւրիշներ ևս հետեւին տրուած այդ բարի օրինակին:

ԱԶՍՏԱԳՐՈՒԹԵԱՆ ՁԵՌՆԱՐԿ

Երաշտութեան պատճառաւ Սուրբոյ անպատի կարգ մը արաբ աշիրէթներ փոխադրուած ըլլալով Ամլգի դաշտը, Մերձակայ Գըրըզ-Խան երթեւեկի առթիւ յայտնի եղած էր որ անոնց մէջ կը գտնուին Հայեր, որոնցմէ 12ը ազատագրուելով իրենց ազգականներուն կամ հայրենակիցներուն յանձնուած են վերջերս: Ասոնց մէջ կը գտնուին երեք Զէյթունցի և մէկ Տիգրանակերտցի երիտասարդներ, Տէօրթ-Յօլցի Մինաս Պալեան և իր կինը և աղաքներ ալ որ իրենց անունը չեն յիշեր:

Այս մասին կը գրէ Միութեան Գըրըզ-Խանի Մասնաժողովը:—

«Եկողները լուր կուտան թէ քանի՜ հարիւրաւորներ դեռ կան Ամլգի դաշտերուն մէջ, մանաւանդ կին ու աղջիկ: Յարգ եկողները 20-28 տարեկան երիտասարդներ են: Դեռ առջի օր շատ զարմանալիօրէն քոյր մը իր եղբայրը գտաւ: Այս առիթէն չօգտուել մեղք է, բայց դրամ կ'ուզէ. այսօր եթէ դրամ ըլլայ՝ հարիւրաւորներ կարելի է ազատել: Կը վախնանք որ մի քանի չաբութէն այս արարները կը հեռանան և մենք կը խղճահարինք այս մասին, եթէ անտարբեր գտնուինք:»

Նկատի ունենալով այդ ազատագրումի ձեռնարկին կարեւորութիւնը, անմիջապէս դումար մը տրամադրուած է Հալէպի և Գըրըզ-Խանի Մասնաժողովներուն, որպէս զի հագուեցնելու և քանի մը օր պատասպարելու և յետոյ գործի դնելու միջոցը ունենան, բայց յուսալի է որ սրտցաւ հայրենակիցներ և Հայրենակցական Միութիւններ պիտի չզլանան իրենց օժանդակութիւնը ընդ

ծայել Միութեան, որպէս զի ապա-
հովութի մի քանի հարիւր կօրսուած հա-
յորդիներու եւ հայուհիներու ձերբազա-
տումը և պաշտպանութիւնը:

ՀԱԶԻՐԻ ԿՈՅՐԵՐՈՒ ԱՊԱՍՏԱՆՈՐԱՆԸ

Յունիսի շաբաթ օր մը Պէյրութէն
ինքնաշարժով կը մեկնիմ Ղազիր քոյրս
այցելելու համար: Ողորկ ճամբուն
վրայ ինքնաշարժը կը սուրաւ անար-
դել թռչունի մը պէս թեթեւ: Ի տես
Լիբանանեան գեղատեսիլ լեռներու և
դալարազեղ պարտէզներու, յանկարծ
հայրենի քաղցր յուշեր, մանկական ա-
նուշակ տպաւորութիւններ սկսան ար-
թննալ մտքիս ու հոգւոյս մէջ:

Եւ ժամը հինգին կը հասնիմ հոն,
Կոյրերու Ապաստանարանին մէջ քոյրս
տեսնելու փափաքով:

Քրոջս ընկերակցութեամբ կ'այցելեմ
Տիար Վահրամ Սալիպեանը, որ հաս-
տատութեան մէջ կարեւոր պաշտօն մը
կը վարէ:

Վ. Սալիպեան շատ խօնարհ և ազ-
նիւ երիտասարդ մըն է հոգեւոր եռան-
դով լեցուն: Կիրակի օրերէն զատ,
շաբթուան մէջ երկու օր աղօթածողով-
ներու կ'առաջնորդէ իր հանգիստը զա-
հելով:

Այս տարի հաստատութեան մէջ հո-
գեւոր արթնութիւն մը եղած է, 24 հո-
գի ապաշխարած են, 20ը աղջիկ, 4ը տը-
ղայ, և Տէրոջը շնորհքով կեանքը կը
շարունակեն: ասիկա հոգեկան անսահ-
ման հրճուանքով կը յիշատակեմ հոս:

Կարճ խօսակցութենէ մը յետոյ Տիար
Վ. Սալիպեանի ընկերակցութեամբ կը
ներկայանամ հաստատութեան Տնօրէն
Տիար Վիչլըրին:

Կոյրերու Ապաստանարանը՝ որ կը
կառավարուի Զուիցերիացի հաւատաց-
եալներու գրամով, աարիններէ ի վեր

նախախնամական գնահատելի դեր կա-
տարած է 100է աւելի երկտեւ Հայ ծը-
նողագուրկ— աչազուրկներու ինչպէս
ճնոր Աւետարներ» ի ընթերցողներուն ծա-
նօթ է:

Նկատելով որ տիրող համաշխարհա-
յին տնտեսական տագնապը շատ մը
հաստատութեանց գործառնութիւնները
դժուարացուցած է, Տիար Վիչլըրին կը
հարցնեմ:

—Տնտեսական տագնապը Ձեր գոր-
ծին ալ ազդեց, կամ դրամական աղ-
բււրները նուազեցուց:

—Ո՛չ, կը պատասխանէ և դէմքին
վրայ քաղցր ժպիտ մը գծելով կը յա-
ւելու:—

—Զուիցերիոյ Հայոց Բարեկամներու
ընկերութիւնը՝ Զուիցերացի հաւատաց-
եալներու նախաձեռնութեամբ գրամով, այս
տարի, ի Պէյրութ Նոր Գերմանիկ թա-
ղին մէջ մանկապարտէզ մը հիմնեց և
մօտ 200 աղքատ կամ հօրմէ որբ մնա-
ցած հայ մանուկներ Զահլէ՝ օդափոխու-
թեան տարաւ երեք ամսուան համար:

—Մինչեւ հրը պիտի շարունակէք
այս մեծածախս և դժուարին գործը:

—Որչափ ատեն որ մեր Մեծ Բարե-
րաբը, երկնաւոր հայրը, օգնէ մեզի:
Ան մինչեւ այսօր օգնեց մեզի, կը հա-
ւատանք ասկէ յետոյ ալ պիտի օգնէ:

Որչափ ժւրախալի և սփոփիչ է տես-
նել որ հեռաւոր Զուիցերիայէն հաւա-
տացեալներ իրենց քրտինքովը շահած,
հալալ աշխատանքովը վաճակած գրամ-
նին առատօրէն կ'ուտան տառապալիո՞
ցեղիս այս բեկորները կրթելու, խնա-
մելու, կեանքի պայքարին պատրաս-
տելու ինքնապահ դարձնելու համար:

Բայց ո՞վ կը մղէ այդ ազնիւ Զուի-
ցերիացիներ ընելու այս անփոխարինե-
լի զոհողութիւնը օտար ազգի մը զա-
ւակներուն:—Քրիստոս եւ Անոր սէրը:

Ու ես կ'ըսեմ իւրովի, եթէ բոլոր
մարդիկ Քրիստոսի սէրն ու ոգին ունե-

նային, աշխարհէն չարիքը կը վերնար:

Գիշերը հիւրը կ'ըլլամ Տիար Վիշըրի և առտուն, ժամը եօթին, քրօջս ընկերակցութեամբ կ'այցելեմ տղոց և աղջկանց հիւանդանոցները, հիւանդապահը, Օր. Զապէլ, որ իր խղճամիտ ծառայութեամբ և հեղ ու բարի բնաւորութեամբ սիրուած է ամէնէն, մեզի կ'առաջնորդէ: Կանգ կ'առնեմ մահճակալի մ'առջեւ: հիւանդը օրիորդ մըն է դեռատի, որ երկուքուկէս տարիէ իվեր յօգացաւ կը տառապի: Քայլ մ'ալ կը մօտենամ և կը հարցնեմ, վարանոտ:

— Բո՛յր, ի՞նչպէ՞ս էք:

— Փառք Աստուծոյ հանգիստ եմ և գոհ եմ Տէրոջմէս, կը պատասխանէ: Եւ ես դէմքին վրայ կը նշմարեմ ժպիտ մը հրեշտակային զոր երբեք տեսած չեմ հասարակ մահկանացուներու դէմքին վրայ: Ծնողքէն և աչքերէն ալ զրկուելէ յետոյ սաստիկ և անդարմանելի հիւանդութեան անտանելի ցաւերուն մէջ ալ փառք տալ Աստուծոյ և Անկէ գոհանալ, ո՛հ ի՛նչ օրհնեալ վիճակ մըն է:

Կէսօրէ վերջ ժամը 4.30ին կ'այցելեմ Օր. Զապէլը իր սենեակին մէջ, և յետոյ մարլ մտնող արեւին հետ կը մեկնիմ Ղազիրէն, հոգեւոր քաղցր ու անմոռանալի յուշեր մտքիս ու հոգւոյս մէջ:

Պէյրուք

ԿԱՅԾ

ՍՈՒՐԻՈՅ Երիցական Առաքելութեան և Մերձաւոր Արեւելքի (Ժողովական) Առաքելութեան գործակցութեամբ այս տարի Պէյրութի մէջ կը բացուի Աստուածաբանական գպրոց մը, որ միացումն է Աթէնքի Սփուլ ավ Րիլիմընին և Պէյրութի Երիցական Աստուածաբանական վարժարանին: Դըպրոցին նախագահն է Վեր. Ու. Կրիստէլյու Յուսէֆիանին եւ Վեր. Է. Փայ, Բրօֆ.

Լ. Լեւոնեան, Բրօֆ. Միխաիլիտիս, դասեր պիտի ունենան նաև Վեր. Շիրըր, Մր. Նիքըլ, Մր. Էրտման, Վեր. Հ. Հ. Րիկօ, Վեր. Ապտիւլ Քէրիմ: Դպրոցիս հոգաբարձութեան կը մասնակցին Սուրիոյ և Մերձաւոր Արեւելքի Առաքելութեանց կողմէ ընտրուած հաւասար թիւով անձեր: Մերձաւոր Արեւելքի Առաքելութեան մօտերս տեղի ունեցած ժողովին մէջ իր կողմէ ընտրուած անդամներն են Վեր. Հ. Հ. Րիկօ, Վեր. Մ. Այալի, Մր. Պրիւսթըր և Վեր. Կ. Յարութիւնեան: Բրօֆ. Յ. Լեւոնեան ամսոյս սկիզբը ընտանեօք Աթէնքէն Պէյրութ փոխադրուած է արդէն:

ԼԱԹԱՔԻՈՅ Արամօ հայ տրաբախօս գիւղին մէջ Ս. Աստուածածին հայ վանքին հարուստ հողերը ասկէ առաջ գրաւուած էին Ալազիներօս կողմէ, և հայ գիւղացիները հողագուրկ ըլլալով ցրուած են: Լաթաքիոյ Առաջնորդին ջանքերուն շնորհիւ 7-8 ընտանիքներ վերահաստատուած են իրենց գիւղը, ուր բացուած է դպրոց մը երեք տարիներէ իվեր:

ՎԵՐ. Ս. ԱՂԱՊԵԱՆ տմառնային կարճ արձակուրդի մը առթիւ քաղաքէս բացակայ ըլլալուն պատճառաւ Վեր. Ս. Ս. Մանուկեան փոխանորդաբար կը կատարէ Հալէպի էմմանուէլ եկեղեցիին հոգեւոր պաշտամունքները:

ՎԵՐ. Կ. ՅԱՐՈՒԹԻՆԵԱՆ վերջին երկու ամիսներու միջոցին գործած է Հալէպի Բեթէլ Հայ Աւետ. եկեղեցիին մէջ մասնակցելով անոր վարչական ժողովներուն և պէտք եղած պահուն առաջնորդելով անոր հոգեւոր ժողովներուն և քարոզելով երբեմն: Նոր հովիւը, Վեր. Ն. Սարեան, ուրախ ենք որ Սեբ. ի առաջին կիրակին իր եկեղեցիին մէջ պիտի ըլլայ: Վեր. Յարութիւնեան Աւետ. Միութեան Հալէպի Շրջանին մէջ յառաջիկայ տարուան համար

չրջիկ աւետարանիչ նշանակուած է. Սեբաստիան ամսուան միջոցին իր առաջին այցելութիւնը պիտի ընէ եկեղեցիներուն:

ԲԷՄՓԻ ՄԷՋ, Հալեպ, եկեղեցիին շինութեան համար գետինը ծախու առնուած է, մօտաւորապէս 6000 քառ. կանգուն տաքածութեամբ և աւելի քան 1000 օսմ. օսկի արժողութեամբ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ Բուրդերուն համար Բրոֆ. Խաչատուրեան քրտերէն քերականութիւն մը պատրաստած է, որ լատինական տառերով ապագրուած է: Ուրոշուած է բնալուծութեան, բնագիտութեան և աշխարհագրութեան վերաբերեալ քրտերէն գիրքեր ևս ապել Բրոֆ. Խաչատուրեանի և Բրոֆ. Ղափանցեանի մօտնակցութեամբ:

ԸՆԴ. ՊԱՏԵՐԱՋՄԻ նախօրեակին Անտիոքի և Լաթաքիոյ միջև Բարեգործականի կողմէ ի նպատակ Արֆալուի հայ գիւղացիներուն գնուած ագարակին միջ մասը տարագրութեան միջոցին թրքաց ձեռքը անցած էր: Կառավարութեան մօտ եղած ջանքերու շնորհիւ հողերէն մէկ մասը արդէն հայերը վերստացած են:

ՊԵՏՐՈՒԹԷՆ մեզի ղրկուած, Էջրէֆիյէի Հայ Աւետ. Եկեղեցիի տարեկան վիճակացոյցէն կը քաղենք.

Բոլոր ժողովուրդը 745 այրերէ և 655 կիներէ կը բաղկանայ: Մկրտուած են 28 մանուկներ, ամուսնացած են 11 զոյգեր, մեռած են 25 հոգի: Հաղորդական անդամներու թիւն է 317 կին և 94 այր՝ ընդամէնը 411 հոգի որոնցմէ մահուամբ և ուրիշ տեղ դադարելով պակասածները զեղջիւղով մնացած է 269: Կ. Վարժաբանի աշակերտութեան թիւն է 550, 2 օւսուցիչներու և 27 վարժուհիներու խնամքին յանձնուած: Զանիցի անգամուհիներուն թիւն է 90, անդամներունը՝ 70: Մանկապարտէզի մէջ կան 308 մանուկներ 9 վարժուհի-

ներով, իսկ նախկին տարեկան մէջ՝ 436 աշակերտներ, 3 օւսուցիչ և 17 վարժուհի: Դպրոցներուն տարեկան ծախքն է 3935 սուրի լիբա: Եկեղեցիին ծախքը՝ պաշտօնեաներուն 2524, աւետչ. և բարեգործական նպատակներու՝ 558.93, շինութեան՝ 610, այլ և այլի՝ 134.11 սուրի. ոսկի, գումար՝ 3826.24: Եկեղեցիին և դպրոցին ընդհանուր ծախքը եղած է 7761.24 սուրի. օսկի:

ԲԱՋՄԱՎԷՊԻ վերջին թիւին, թիւ 8-9ին մէջ կը կարդանք թէ Սեւրի մէջ, Բարիզ, Յուլիս 3ին Մուրատեան վարժարանի չորրորդ տարեկան ամսական հանդէսը փառաւոր կերպով տօնուած է ի ներկայութեան 700 հոգւոյ չափ հոծ բազմութեան մը, դպրոցը իր անդրանիկ շրջանաւարտները պիտի առայ 1934ին: Այս հանդէսին ներկայ գտնուած են ֆրանսացի պետական և ուրիշ ակադեմիքներ և յայտնի հայեր: Հանդէսին նախագահած է ֆրանսական Ակադեմիայի անդամ Ժորժ Կոյիոյ, որ իր ճառին մէջ գրուած խօսքերով վեր առած է հայ ազգին կատարած քաղաքակրթական դերը, և Միսիթարեան Միաբանութեան գրական և կրթական գործունէութիւնը:

Այս տարի աշակերտութեան թիւը 54 ի հասած է, 50ը գիշերօթիկ իսկ 4ը ցերեկօթիկ:

Յաջողագոյն աշակերտաց ֆրանսական և իտալական պետութիւններէն Ս. Ղազարէն և Մ. Ռ. Ն. Սանուց Միութենէն մրցանակներ արուած են: Երաժշտագէտ Բրոֆ. Գ. Ալէմշահ հանգէսին մեծ փայլ տուած է իր համերգով և խմբերգներովը:

ՄԻԼԱՆՈՅԻ Միսիթարեան վարժարանը տնտեսական ազնապի պատճառաւ փակուած է և Հ. Յ. Մարգարեան և Հ. Գ. Լազարեան վերջնականապէս քաղաքէն մեկնած են:

ՊԱՆՍՈՒԼԱՅ Թերթերուն զբաժին հա-

մեմատ էջմիածին հրաւիրուած չորս եպիսկոպոսները պիտի չկրնան հոն երթալ կաթողիկոսական ընտրութեան մասնակցելու համար: Պատրիարք Նորոյեան Ս. ալ փոխանորդ մը պիտի անուանէ:


«ՀՈՐԻԶՈՆ» թերթի Օգոստոս 18 թիւին մէջ գրուածին համեմատ Սելանիկի թուրք հիւպատոսարանը նպաստաւոր պատասխան մը տալով է Անդարայէն՝ թուրքիա զաղթել ցանկացող հայերուն մասին: Սելանիկ քնակող 60 ի մօտ հայերու պէյաննամէները թուրք կռուավարութեան կողմէ վաւերացուած են: Այժմ անոնք արտօնուած են կանոնաւոր անցագիր ստանալով թուրքիա վերադառնալ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ կռուավարութիւնը ընդառաջելով յայտնուած փափաքին Նոր Տիգրանակերտի շինութեան մասին, տ-

րոշած է անոր տեղը Երեւանի մօտ Նոր Մուրթիոյ և Նոր Սեբաստիոյ մէջ տեղը: Տիգրանակերտի հայրենակցական և վերաշինական կեդր. վարչութիւնը Ամերիկայէն 3000 տոլար ղըկած է այս նպատակով:

ՊՈԼՍԱՀԱՅ թերթերուն համեմատ Սամսոնի մէջ ներկայիս կ'ապրին 100 տուն հայեր, ոմանք արհեստաւոր են իսկ ռւրիչներ վաճառական, կիւմիւշ, Հանի Բէօյի մէջ կ'ապրին 80 տանի չափ հայեր զբաղին առեւտուրով և հողագործութեամբ, Ամասիա կը գտնուին 100 տուն հայ և կը պարապին արհեստով և առեւտուրով: Կը գրուի թէ՛ այս բոլոր վայրերուն հայերն ալ բարեկեցիկ վիճակի մէջ են, տեղացի թուրքերը թիրով կը վարուին անոնց հետ: Կռուավարութիւնը ամէն տեսակ դիւրութիւն շնորհած է անոնց, քահանայի մը անհրաժեշտ պէտքը ունին միայն:





PRESCRIBE

IODO-MALT

— QUINO-MALT

IDEAL TONICS

FOR ALL



Իօժօ+Մալթ=Իօտօմալթ.

Իօտօմալթի գործածութիւնը զմայլելի արդիւնք կ'ուտայ՝ թէ՛ իբրեւ կանխարգելիչ միջոց մը և թէ՛ իբրեւ բուժիչ, անհամար հիւանդութեանց մէջ, որոնց սկզբնաւորութիւնը հազիւ թէ հասկնալի դարձած է:

Իօտօմալթը սահմանափակ է բուժելու ամէն տեսակ մարսողական անկանոնութիւն, որ բազմազան ձեւերով երեւան կուգայ, յանգելով երբեմն հիւծախտի այտուցաւոր թոքախտի, դալկահարութեան, պնդեղակութեան և երբ անոնք զանազան բարդութեանց, մանաւանդ՝ հետեւանքներն են թերի անհաղուցեան:

Քինօ+Մալթ=Քինօմալթ.

Քինօմալթը՝ անհրաժեշտ դարձան մըն է, հետզհետէ յառաջացող նիհարութեան, որ կրնայ հետեւանքն ըլլալ որեւէ ծայրայեղութեան մը, կամ չարաչար աշխատանքի:

Քինօմալթը անփոխարինելի է մանաւանդ՝ ուժաթափութեան և հիւծումի պարագաներուն, ինչպէս նաեւ հիւանդութենէ մը վերջ, ապաքինման շրջանին համար:

Իօտօմալթը և Քինօմալթը ախորժակամ ըլլալով, դիւրաւ կ'ընեն առնել չափ մանուկներ, տարեցներ, տիկիներ, և նոյն իսկ ամէնէն ներառաչակ անձեր:

Զաւիհատներու համար.— Օրական երեք անգամ, մէյմէկ ապուրի դգալ: Մանուկներու համար.— Այս դեղաչափին կէսը:

Իօտօմալթը և Քինօմալթը կը ծախուին բոլոր յայտնի դեղարաններու մէջ:

NOR AVEDAPER

B. P. 287, ALEP, SYRIE

سوق الحارثية في حلب

صاحب الامتياز والمدير المسؤول القس ق. حارثونيان